



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2022 | N1

ISSN 1829-4952



ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

1

Երևան - 2022

Հրատարակության է երաշխավորվել Եվրասիա միջազգային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, ք.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառոտական պետական համալսարան (Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)
Աննա Օհանյան, ք.գ.դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր
Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմասյան, տ.գ.թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն
Գրաժինա Չուպուդեն, մանկ.գ.դ., դոցենտ, Լիտվայի Միկոլայ Ռոմերիս համալսարան
Դմիտրի Զախոս, մանկ.գ.դ. դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան
Երանուհի Մանուկյան, փ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ.գ.դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Լուսինե Հարությունյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Լուսինե Ֆլյյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Խաչիկ Գալստյան, ք.գ.դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Հեղինե Մանասյան, տ.գ.դ., Հետազոտական ռեսուրսների կոլկալայան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան
Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան
Մարիամ Մարգարյան, ք.գ.դ., պրոֆեսոր, փ.գ.թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Մարտա Ցիվինսկա, ք.գ.թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների խումբ,
Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wsztechnica Polska համալսարան
Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների համալսարան
Ռամոն Բուազաս Լորենցո, ք.գ.թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)
Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Սոնա Հակոբյան, ք.գ.թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան
Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
Վահե Վանեսյան, ք.գ.դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն
Վլադիմիր Հովհաննիսյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝

Նունե Զոմարյան, Եվրասիա միջազգային համալսարան

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈՎԿ-ի 28.06.2019թ. N° 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԿՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2022

**Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия**

Редакционная коллегия

Гагик Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет
Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России.)
Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США
Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА
Ашот Алексанян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет
Ашот Маркосян, д-р экон. наук, профессор, Ереванский государственный университет
Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, судья Конституционного суда Республики Армения
Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития
Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет
Гаяне Товмасян, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении
Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва
Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция
Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет
Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет
Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия
Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения
Марта Цывинска, д-р филол. наук, Университет Вистула (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wszelchnica Polska в Варшаве
Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия
Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша
Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания
Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет
Сона Акопян, канд. филол. наук, Европейский университет Армении
Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия
Степан Цагикян, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет
Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет
Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:

Нуне Джомардян, Международный университет Евразия

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2022

***Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University***

Editorial Board:

Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University

Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)

Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA

Aram Apyazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee

Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judge of the Constitutional Court of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University

Dmitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece

Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University

Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, "AMBERD" Research Center of the Armenian State University of Economics

Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania

Heghine Manasyan, Doctor of Economics, Caucasus Research Resource Center (CRRC)-Armenia

Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University

Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University

Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatour Abovyan Armenian State Pedagogical University

Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics

Lusine Fljyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University

Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia

Marta Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wszechnica Polska University in Warsaw, Poland

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland

Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain

Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.

Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University

Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development

Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board: Nune Jomardyan, Eurasia International University

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՎԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՊԱՇՏԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 8

Նունե Զոմարոյան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19

Ստեփան Ծաղիկյան, Սեդա Հովհաննիսյան

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 42

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Վարդանյան, Դավիթ Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ. ՌԻՍԿԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ 52

Գայանե Թովմասյան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ՄԱՐԴԱՆՑ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ 69

Լեռա Վաթնիկյան ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լալիկ Խաչատրյան, Սիրարփի Դավթյան ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՄԱՆՈՒՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 87

Սիրարփի Կարապետյան

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՄԱՆ ՄԵՋ 104

Իրինա Մխիթարյան, Դիանա Հայրոյան

ԿԵՐՊԱՓՈՒՄՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՋՎԱՃՄԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 116

Անուշ Մարտիրոսյան

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ 129

Լուիզա Մարաբյան, Սոնա Հակոբյան

ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՎ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ) 145

Արթուր Միրզոյան

ՔԱՂԱՔԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՑ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԽՈՒՄՀԱՐ» ՎԻՊԱԿՈՒՄ 154

Էդգար Արշակյան

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՐԱՎԱԼՈՒՄԸ Ա. ԲԼՈԿԻ ԵՎ Ա. ԲԵԼՈՒ ՎԱՂ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ 168

СОДЕРЖАНИЕ

СЮРИСПРУДЕНЦИЯ

Геворг Израелян

К ВОПРОСУ ОБ ОБЕСПЕЧЕНИИ ПРАВА НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ
В АДМИНИСТРАТИВНОМ ПРОЦЕССЕ ПО ДЕЛАМ НАРУШЕНИЙ ПРАВИЛ ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ,
КОТОРЫЕ ОБНАРУЖИВАЮТСЯ СРЕДСТВАМИ ВИДЕО ИЛИ ФОТО-ТЕХНИКИ 8

Нуне Джомардян

ПРОБЛЕМА КОНСТИТУЦИОННОЙ ЗАЩИТЫ СОЦИАЛЬНЫХ
ПРАВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 19

Степан Цагикян, Седа Оганнисян

ОСВОБОЖДЕНИЕ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВИДЫ ВЗЯТОЧНИЧЕСТВА КАК
СРЕДСТВО ПООЩРЕНИЯ 42

ЭКОНОМИКА

Гагик Варданян, Давид Варданян

ВНЕШНИЕ ИСТОЧНИКИ ФИНАНСИРОВАНИЯ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.
РИСКИ И ОГРАНИЧЕНИЯ 52

Гаяне Товмасын

ВЛИЯНИЕ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ НА НАШУ ЖИЗНЬ И ЭКОНОМИЧЕСКИЕ РЕШЕНИЯ 69

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Лалик Хачатрян, Сирарпи Давтян

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ОБЩЕАРМЯНСКИХ НАЗВАНИЙ МЕСЯЦЕВ 87

Сирарпи Карапетын

РОЛЬ ЗАИМСТВОВАНИЙ ИЗ ГРАБАРА (ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА) В ФОРМИРОВАНИИ
СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ 104

Ирина Мхитарян, Диана Айроян

ПЕРЕВОДЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МЕТАМОРФОЗЫ С ЛИНГВОКОГНИТИВНОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ 116

Ануш Мартиросян

ОСОБЕННОСТИ МОДАЛЬНОСТИ В ДИПЛОМАТИЧЕСКОЙ РЕЧИ 129

Луиза Марабян, Сона Акопян

ПРЕРЫВАНИЕ КАК СРЕДСТВО ВЫРАЖЕНИЯ ГЕНДЕРНОЙ АГРЕССИИ И КОММУНИКАЦИОННОЙ
СТРАТЕГИИ (ССЫЛАЯСЬ НА ДЕБАТЫ КАНДИДАТОВ В ПРЕЗИДЕНТЫ США) 145

Артур Мирзоян

ГОРОД И СОВРЕМЕННОСТЬ В РОМАНЕ ГРАНТА МАТЕВОСЯНА « ПОХМЕЛЬЕ» 154

Эдгар Аршакян

МИФОЛОГИЗМ РУБЕЖНОЙ ЭПОХИ В РАННЕЙ ЛИРИКЕ А. БЛОКА И А. БЕЛОГО 168

CONTENT

JURISPRUDENCE

Gevorg Israyelyan

ON THE ISSUE OF ENSURING THE RIGHT OF A PROPERLY ADMINISTRATION IN THE ADMINISTRATIVE PROCEDURE OF TRAFFICKING VIOLATIONS DETECTED WITH VIDEO RECORDING OR PHOTOGRAPHIC DEVICES 8

Nune Jomardyan

THE ISSUE OF CONSTITUTIONAL PROTECTION OF SOCIAL RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA 19

Stepan Tsagikyan, Seda Hovhannisyan

EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY FOR TYPES OF BRIBERY AS A MEANS OF INCENTIVE 42

ECONOMICS

Gagik Vardanyan, David Vardanyan

EXTERNAL SOURCES OF INVESTMENT FINANCING IN THE REPUBLIC OF ARMENIA. RISKS AND LIMITATIONS 52

Gayane Tovmasyan

THE IMPACT OF SOCIAL NETWORKS ON THE LIFE OF RA CITIZENS AND ECONOMIC DECISIONS 69

LINGUISTICS AND PHILOLOGY

Lalik Khachatryan, Sirarpi Davtyan

QUESTIONS ON THE SUBJECT OF THE ORIGIN OF COMMON ARMENIAN MONTH NAMES 87

Sirarpi Karapetyan

THE ROLE OF GRABAR (OLD ARMENIAN) BORROWINGS IN CONTEMPORARY ARMENIAN TERM-FORMATION 104

Irina Mkhitarian, Diana Hayroyan

TRANSLATION PECULIARITIES OF METAMORPHOSIS FROM LINGUOCOGNITIVE AND LINGUOSTYLISTIC STANDPOINTS 116

Anush Martirosyan

MODALITY'S FEATURES OF DIPLOMATIC DISCOURSE 129

Luiza Marabyan, Sona Hakobyan

INTERRUPTION AS A MEANS OF EXPRESSING GENDER AGGRESSION AND AS A COMMUNICATION STRATEGY (WITH SPECIAL REFERENCE TO US PRESIDENTIAL CANDIDATE DEBATES) 145

Arthur Mirzoyan

THE CITY AND MODERNITY IN HRANT MATEVOSYAN'S NOVEL "HANGOVER" 154

Edgar Arshakyan

MYTHOLOGISM OF THE THRESHOLD OF A NEW EPOCH IN A. BLOK'S AND A. BELY'S EARLY LYRICS 168

Գևորգ Իսրայելյան

*Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*
Էլ. հասցե՝ *g_i_1979@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2022.1-8

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում կատարվում են բազմաթիվ իրավախախտումներ: Դրանց մի մասը հայտնաբերվում է տեխնիկական միջոցներով: Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկություններից է գործի լուծումը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ: Այս հանգամանքով է պայմանավորված սույն հովազում անձի պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման խնդրի քննարկումը վերը նշված վարչական վարույթում: Հետազոտության արդիականությունը և նորույթը պայմանավորված է բացառապես տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի և այդ ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության հարցերին նվիրված հետազոտությունների բացակայությամբ:

Հիմնաբառեր. վարչական իրավախախտում, ճանապարհային երթևեկության կանոն, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարք, վարչական վարույթ, պատշաճ վարչարարություն:

Ներածություն

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի տեսակ է տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթը (այսուհետ՝ Վարույթ): Այլ վարույթներից այն տարբերվում է մի շարք առանձնահատկություններով: Մասնավորապես.

1. Վարույթի հիմքում ընկած են ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները: Ընդ որում, խոսքը ճանապարհային երթևեկության կանոնների ոչ թե բոլոր խախտումների, այլ միայն մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված խախտումների մասին է:

2. Ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները պետք է հայտնաբերված լինեն տեխնիկական միջոցներով:

3. Վարույթը կարգավորված է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ խախտումը հայտնաբերել է ճանապարհային ոստիկանը և կանգնեցրել տրանսպորտային միջոցը՝ անկախ փաստը տեխնիկական միջոցով ամրագրված լինելու հանգամանքից: Նմանատիպ դեպքերում գործում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) դրույթները:

4. Ի տարբերություն այլ վարույթների, Վարույթը բաղկացած է երկու փուլերից՝ իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման:

Թվարկված առանձնահատկություններով է պայմանավորված անձի պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման յուրահատկությունը և առկա խնդիրները Վարույթում:

Վերը նշվածի տրամաբանությամբ սույն հոդվածի նպատակը Վարույթում անձի պատշաճ վարչարարության իրավունքի պաշտպանության մակարդակի բարձրացումն է՝ հատկապես անձի լաված լինելու իրավունքի ապահովմամբ:

Մեթոդը

Խնդրո առարկան ուսումնասիրվել է համակարգային վերլուծության և փորձագիտական գնահատման մեթոդների օգտագործմամբ:

Վարույթում անձի պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչների ապահովման առանձնահատկությունները և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 50-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ պատշաճ վարչարարության իրավունքը ծավալուն ինստիտուտ է, ընդգրկում է գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության, փաստաթղթերին ծանոթանալու, լսված լինելու իրավունքները:

Գործերի անաչառ քննության իրավունքը

Օրենսգրքի 245-րդ հոդվածը վարույթի խնդիրների թվին է դասում յուրաքանչյուր գործի հանգամանքներն օբյեկտիվորեն պարզելը: Արդի հայերենի բացատրական բառարանում «օբյեկտիվ» բառը նշանակում է նաև անաչառ, անկողմնակալ: Ըստ այդմ՝ անաչառ քննության իրավունքը գործի օբյեկտիվ վարույթի հնարավորությունն է: Գործի անաչառ քննության իրավունքի ապահովման երաշխիք է բացարկի (ինքնաբացարկի) ինստիտուտը, որը կարգավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24–26-րդ հոդվածներով: Մասնավորապես, վարչական մարմնի պաշտոնատար անձին արգելվում է քննարկել և լուծել գործը, եթե նա.

- վարույթի մասնակից է կամ մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչ,
- աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ,
- վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է,
- նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:

Նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ¹ հայտնել վարույթն իրականացնող պաշտոնատար անձին կամ կոլեգիալ կազմով վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, իսկ վարչական մարմնի ղեկավարը, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է անհապաղ ինքնաբացարկ հայտնել:

Բացարկ, ինքնաբացարկ հայտնելու կարգը սահմանված է օրենքով:

Գործերի արդարացի քննության իրավունքը

Այս իրավունքն ենթադրում է արդարության բոլոր պահանջների պահ-

1 Բացարկ կարող է հայտնվել նաև այն դեպքերում, երբ մինչև գործի քննարկման ավարտը տվյալ պաշտոնատար անձը իրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին, կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին, կամ մինչև ապացույցների հետազոտումը կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին, կամ երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի, կամ առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնատար անձի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության վերաբերյալ:

պանմամբ անկողմնակալ վարչական մարմնի կողմից իր շահերին առնչվող վարչական գործերի քննության հնարավորություն: Վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի արդարացի քննության իրավունքը լրացնում է պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը ՀՀ Սահմանադրությամբ առանձնահատուկ կերպով չնախատեսված որոշակի այլ որակներով ու սկզբունքներով, որոնցից են, մասնավորապես, վարչական վարույթին արդյունավետ մասնակցության, անմեղության կանխավարկածի, իրավական որոշակիության սկզբունքները, ինչպես նաև վարչական վարույթում ապացուցման կանոնները: Վարչարարության ընթացքում նշված սկզբունքների ու կանոնների անտեսումը կամ ոչ պատշաճ երաշխավորումը հանգեցնում է պատշաճ վարչարարության իրավունքի խախտման, քանի որ այդ պարագայում վարչարարությունն իր ամբողջականության մեջ չի համապատասխանում նշված հիմնարար իրավունքի պահանջներին՝ անկախ դրա մյուս բաղադրիչների խախտումների առկայության կամ բացակայության հանգամանքից (Հակոբյան, 2018, էջ 8):

Վարույթում այս իրավունքի ոչ բոլոր տարրերն են առկա: Օրինակ, այս վարույթում վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցությունը չի նախատեսվում:

Գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը

Օրենսգրքի 245-րդ հոդվածը վարույթի խնդիրների թվին է դասում յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին պարզելը, ինչը նշանակում է օրենքով սահմանված վարույթային ժամկետների պահպանում: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 աշխատանքային օրում:

Եթե իրավախախտումը կատարվել է պետական² (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը: Հարցումը ստացած կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը պարտավոր է հնգօրյա ժամկետում վարչական մարմնին գրավոր հայտնել, թե իրավախախտման կատարման պահին ում է ամրացված եղել (ով է վարել) տրանսպորտային միջոցը:

Վարույթ իրականացնող մարմինը վարչական ակտը պարտավոր է ընդունել իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում: Վարչական ակտն ընդունելուց հետո՝ Օրենսգրքով

² Բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցների:

սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:

Ելնելով վերոգրյալից՝ վարչական մարմինը գործի քննությունը պետք է իրականացնի նշված ժամկետներում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործի ողջամիտ քննության իրավունքն ապահովվում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի կարգավորումներով: Հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ձշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չապասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

Այս իրավունքի իրագործման հնարավորություն նախատեսված չէ Վարույթի³ ընթացքում: Խնդիրն այն է, որ վարչական ակտի հասցեատերը մինչև վարչական ակտի հանձնվելը փաստացի տեղյակ չի լինում իր նկատմամբ իրականացված վարույթի մասին: Ըստ Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վարչական ակտի հասցեատերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը կարող է տեսանյութի պատճենը տրամադրելու դիմում ներկայացնել վարչական ակտին իրազեկվելու պահից:

Լսված լինելու իրավունքը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Առհասարակ, վարչական վարույթում լսված լինելու իրավունքի ապահովման կառուցակարգը լսումներն են: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի ընթացքում

3 Վարույթի վերաբերյալ գործերը վարվում են էլեկտրոնային եղանակով՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանների միջոցով:

պարտավոր է վարույթի մասնակիցներին, նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե.

- 1) ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն,
- 2) դիմումն ակնհայտ անհիմն է,
- 3) ընդունվում է բանավոր վարչական ակտ:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է այն դեպքերը, երբ լուումներ չեն անցկացվում.

- 1) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման,
- 2) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

Վերոգրյալ կարգավորումները չեն տարածվում Վարույթի նկատմամբ, քանի որ Վարույթի առանձնահատկությունները սահմանող Օրենքն այդ մասին լուում է: Բնական է՝ եթե վարչական ակտի հասցեատերը տեղեկանում է իր վերաբերյալ իրականացված վարույթի մասին միայն դրա ավարտից հետո, ապա լաված լինելու իրավունքի մասին խոսք լինել չի կարող:

Խնդրո առարկայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները

Վճռաբեկ դատարանը Վարույթին առնչվող որոշ իրավական կարգավորումների (մասնավորապես՝ Վարույթում ապացուցմանը և ընթացիկ փուլի բացակայությանը) և դրանց կիրառումն ապահովող մարմինների կողմից մեկնաբանման հարցերին անդրադարձ է կատարել 2015թ. Վարչական գործ թիվ ՎԴ/1091/05/14-ով և Վարչական գործ թիվ ՎԴ/6199/05/13-ով ընդունված իր որոշումներում: Քննարկելով կոնկրետ խախտումների վերաբերյալ հարցերը՝ նշված որոշումներում Վճռաբեկ դատարանը նշել է, որ Օրենքի իմաստով իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, այսինքն՝ առկա է իրավախախտման փաստը, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, **որը որևէ կասկած չի հարուցում:** Այլ կերպ ասած՝ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների համապատասխանության կասկած չհարուցելը:

Վարչական գործ թիվ ՎԴ/1091/05/14-ով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, նշված հանգամանքով պայմանավորված, Վարույթի համար նախատեսել է միայն երկու փուլ՝ իրավախախտման

հատկանիշների պարզման (հարուցման) և վարչական ակտի ընդունման (եզրափակիչ) փուլերը: Վարույթում ընթացիկ փուլի բացառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների ակնհայտ համընկնման, այդ համընկնման վերաբերյալ որևէ կասկածի կամ վերապահման բացակայության պայմաններում հաստատվում է իրավախախտման փաստը, և բացակայում է նաև իրավախախտման հետ կապված այլ հանգամանքների պարզման, հետևաբար նաև՝ ընթացիկ փուլի անհրաժեշտությունը:

Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է. «Մինչդեռ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով որևէ իրավակարգավորում նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած է հարուցում (...): Օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության պարագայում վարչական մարմինը գրկված է այդ կասկածը փարատելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու և դրանք գնահատելու հնարավորությունից»: Նշվածը վկայում է օրենսդրական փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին:

Բացի այդ, գործնականում հանդիպել են դեպքեր, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշները և իրավախախտման հատկանիշները (օբյեկտիվ կողմը) համընկել են, սակայն խնդիր է առաջացել վարչական պատասխանատվության ենթարկվող անձի հետ կապված: Օրինակ՝ տրանսպորտային միջոցը խախտման կատարման պահին շահագործել է այլ անձ, սակայն վարչական ակտը ստացել է սեփականատերը: Մինչդեռ նշված իրավիճակները կբացառվեին՝ պատշաճ վարչարարության իրավունքի՝ ամբողջ ծավալով ապահովման պարագայում:

Վարույթում անձի պատշաճ վարչարարության իրավունքի ապահովմանը խոչընդոտող հանգամանքների վերացմանն ուղղված առաջարկություններ

Վերը շարադրվածից բխում է՝ Վարույթում պատշաճ վարչարարության իրավունքի ոչ բոլոր տարրերն են ապահովված, մասնավորապես՝ վարչական ակտի հասցեատերը չի ծանուցվում իր նկատմամբ իրականացվող վարույթի մասին, չի ունենում Վարույթին մասնակցելու, ուստի և Վարույթի ընթացքում վարութային փաստաթղթերին ծանոթանալու և լսված լինելու հնարավորություն: Մեր կարծիքով, նշվածը պարզապես Վարույթի առանձնահատկություններով հիմնավորելը ձիշտ չէ, անձը պետք է օգտվի իր սահմանադրական իրավունքից ամբողջ ծավալով, ուստի անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Վարույթում պատշաճ վարչարարության իրավունքի բոլոր տարրերն

ապահովելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է Օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Վարույթի համար սահմանել վարչական վարույթի ավանդական 3 փուլերը,
2. նախատեսել իրականացվող Վարույթի մասին վարչական ակտի հասցեատիրոջ ծանուցման ընթացակարգ,
3. ընձեռել վարչական ակտի հասցեատիրոջ՝ Վարույթին մասնակցելու, Վարույթի ընթացքում վարութային փաստաթղթերին ծանոթանալու և լաված լինելու հնարավորություն:

Նշվածը հնարավորություն կտա Վարույթում վարչական ակտի հասցեատիրոջը ամբողջ ծավալով օգտվել պատշաճ վարչարարության իրավունքից, ընդլայնել ապացույցների շրջանակը (օրինակ՝ որպես ապացույց նախատեսել վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրությունը), ինչի հիման վրա վարչական մարմնին ընդունել առավել հիմնավոր վարչական ակտեր, հնարավոր սխալների դեպքում խուսափել վերադատության, իսկ հետագայում նաև դատական կարգով անհարգի բողոքարկումներից, ինչն իր հերթին թույլ կտա զերծ մնալ ռեսուրսների ավելորդ վատնումից:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ Վարույթում վարչական ակտի հասցեատերը գործնականում չունի հնարավորություն ամբողջ ծավալով օգտվելու իր՝ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքից: Մեր կողմից ներկայացվող առաջարկությունները հնարավորություն կտան կատարելագործել Վարույթը կարգավորող Օրենքը, արդյունքում՝ առկա կլինեն քննարկվող սահմանադրական իրավունքի բոլոր բաղադրիչներից օգտվելու կառուցակարգեր: Նման պարագայում վարչական ակտի հասցեատերն ինքը կորոշի օգտվել համապատասխան իրավունքից, թե՛ ոչ:

Օգտագործված գրականություն

ՀՀ Սահմանադրություն, ընդունված 2005թ. հուլիսի 5-ին (առ 06.12.2015թ. փոփոխություններով): Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2015.12.21:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունված 1985թ. դեկտեմբերի 6-ին (առ 30.07.2021թ. փոփոխություններով և լրացումներով): Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՍՍՀԳՍ 1985/23:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունված 2004թ. փետրվարի 18-ին (առ 16.12.2021թ. փոփոխություններով և լրացումներով): Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ձանապարհ»

հային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունված 2008թ. Դեկտեմբերի 26-ին (առ 21.01.2020թ. փոփոխություններով և լրացումներով): Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2008.12.30/76(666):

Վարչական գործ թիվ ՎԴ/6199/05/13-ով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում, ընդունված 2015թ. ապրիլի 30-ին: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2015.06.03/31(1120):

Վարչական գործ թիվ ՎԴ/1091/05/14-ով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում, ընդունված 2015թ. նոյեմբերի 27-ին: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2016.01.22/3(1183):

Արդի հայերենի բացառական բառարան http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D6%85%D5%A2%D5%B5%D5%A5%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE:

(մուտք՝ 23.02.2022)

Հակոբյան Կ.Վ., Անձի պարզաձ վարչարարության իրավունքը՝ սահմանադրական կարգավորումների համապետություն: Ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան, 2018:

References

Hayastani Hanrapetutyun Sahmanadrutyun [Constitution of the Republic of Armenia], yndunvats 1995t. hulusi 5-in. (ar 06.12.2015t. popokhutyunnerov). Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT 2015.12.21.

Varchakan iravakhakhtumneri veraberyal Hayastani Hanrapetutyun orensgirk [Republic of Armenia Code on Administrative Offences], yndunvats 1985t. dektemberi 6-in. (ar 30.07.2021t. popokhutyunnerov yev lratsumnerov). Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HSSHGST 1985/23.

Varchararutyian himunqneri ev varchakan varuyti masin Hayastani Hanrapetutyian orenk [Law of the Republic of Armenia on the Principles of Administration and Administrative proceedings], yndunvats 2004t. petrvaı 18-in (ar 16.12.2021թ. popokhutyunnerov yev lratsumnerov): Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT 2004.03.31/18(317):

Tesankarahanogh kam lusankarahanogh sarqerov haytnabervats chanaparhayin ertevekyutan kanonneri khakhtumneri veraberyal gortserov irakanacvogh varchakan varuyti arandznahatkutyunneri masin Hayastani Hanrapetutyian orenk [Law of the Republic of Armenia on Find out with video or photo equipment on the peculiarities of the administrative proceedings on cases of violations of traffic rules], yndunvats 2008t. ektemberi 26-in (ar 21.01.2020թ. popokhutyunnerov yev lratsumnerov): Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT 2008.12.30/76(666):

Varchakan gorts tiv VD/6199/05/13-ov HH Vchrabek datarani voroshum, yndunvats 2015t. aprili 30-in: Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT 2015.06.03/31(1120):

Varchakan gorts tiv VD/1091/05/14-ov HH Vchrabek datarani voroshum, yndunvats 2015t. noyemberi 27-in: Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT

2016.01.22/3(1183):

Ardi hayereni bacatrakan bararan [Explanatory dictionary of modern Armenian]. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D6%85%D5%A2%D5%B5%D5%A5%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE (accessed 23.02.2022)

Hakobyan K.V. Andzi patshach varchararutyun iravunqy sahmanadrakan kargavorumneri hamatekstum [The right to proper administration of a person in the context of constitutional regulations]. I.g.t. gitakan astichani haycman atenaxosutyun seghmagir: Yerevan, 2018:

Геворг Израелян

*Преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: g_i_1979@mail.ru*

К ВОПРОСУ ОБ ОБЕСПЕЧЕНИИ ПРАВА НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ В АДМИНИСТРАТИВНОМ ПРОЦЕССЕ ПО ДЕЛАМ НАРУШЕНИЙ ПРАВИЛ ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ, КОТОРЫЕ ОБНАРУЖИВАЮТСЯ СРЕДСТВАМИ ВИДЕО ИЛИ ФОТО-ТЕХНИКИ

К видам процесса по делам об административных правонарушениях относится административное производство по делам о нарушениях правил дорожного движения, которые обнаружены средствами видео- или фотосъемки. Одной из особенностей административного производства по делам о нарушениях правил дорожного движения, выявленных средствами видео- или фотосъемки, является разрешение дела в отсутствие лица, привлекаемого к административной ответственности. В связи с этим обстоятельством автор выносит на обсуждение вопрос обеспечения права на надлежащее администрирование лицом в вышеуказанном виде административного процесса.

Исследования автора показали, что право надлежащего администрирования в административном процессе по делам нарушений правил дорожного движения, которые обнаруживаются техническими средствами, реализуется не полностью. Автор предлагает провести законодательные изменения, которые позволят адресату административного акта в полной мере реализовать право надлежащего администрирования в производстве; расширить круг доказательств, вследствие чего административный орган будет принимать более обоснованные административные акты; в случае возможных ошибок избежать бессмысленного обжалования в административном и судебном порядке, что в свою очередь позволит миновать ненужные траты ресурсов.

Ключевые слова: административное правонарушение, правила дорожного движения, видео или фото-техника, административный процесс, надлежащее администрирование.

Gevorg Israyelyan

Lecturer of the Law Department at Eurasia International University,

Ph.D. in Law, Associate Professor,

Email: g_i_1979@mail.ru

**ON THE ISSUE OF ENSURING THE RIGHT OF A PROPERLY
ADMINISTRATION IN THE ADMINISTRATIVE PROCEDURE OF
TRAFFICKING VIOLATIONS DETECTED WITH VIDEO RECORDING
OR PHOTOGRAPHIC DEVICES**

The types of proceedings in cases of administrative violations include administrative proceedings in cases of violations of traffic rules, which were detected by means of video or photography. One of the features of administrative proceedings in cases of violations of traffic rules, revealed by means of video or photography, is the resolution of the case in the absence of a person who is brought to administrative responsibility. Due to this circumstance, the author decided to discuss the issue of ensuring the right to proper management of the person in the above-mentioned form of the administrative process.

The author's research has shown that the right of proper administration in the administrative process in cases of violations of traffic rules that are detected by technical means is not fully realized. The author proposes to carry out legislative changes that will allow the addressee of the administrative act to fully exercise the right of proper administration in proceedings; expand the range of evidence, as a result of which the administrative body will adopt more substantiated administrative acts; in case of possible errors, to avoid senseless appeal in administrative and judicial proceedings, which in turn will allow to bypass the unnecessary waste of resources.

Key words: administrative offense, traffic rules, video or photo equipment, administrative proceedings, proper administration.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. փետրվարի 25-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. մարտի 3-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. ապրիլի 10-ին:

Նունե Զոմարդյան
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am
DOI: 10.53614/18294952-2022.1-19

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնվելով համեմատական սահմանադրական իրավունքի գիտության մեջ առկա տեսությունների, ինչպես նաև միջազգային և ներպետական մակարդակներում ձևավորված դատական պրակտիկայի վրա՝ սույն հոդվածում քննարկվում է սոցիալական իրավունքների սահմանադրականացման հիմնախնդիրը: Չնայած առկա իրարամերժ մոտեցումներին ու տարածայնություններին՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա են սահմանադրական կարգավորման մի շարք ընդունելի կառուցակարգեր: Վերլուծելով դատական սահմանադրական վերահսկողության ուժեղ և թույլ ձևերը՝ հեղինակը ընդգծում է թույլ կամ երկխոսության դատական վերահսկողության կարևորությունը սոցիալական իրավունքների պաշտպանության գործում: Հոդվածում ներկայացվում են իրավական պաշտպանության թույլ միջոցների առավել քննարկվող չորս նմուշօրինակների առավելություններն ու թերությունները: Ուսումնասիրությունների հիման վրա հեղինակն առաջարկում է ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում գետեղված սոցիալական իրավունքները, որոնք ամրագրված են որպես օրենսդրական երաշխիքներ և քաղաքական նպատակներ, ապահովել պաշտպանության հատուկ ռեժիմով՝ հիմնվելով դատական սահմանադրական թույլ վերահսկողության վրա: Հեղինակը գտնում է, որ, որպես թույլ վերահսկողության տարբերակներ, կարող են դիտարկվել «ողջամտության չափանիշ»-ի կամ խառը (թույլ և ուժեղ, հիբրիդ) սահմանադրա-

կան վերահսկողության նմուշօրինակները՝ կախված պետության առջև ծառայած քաղաքական խնդիրներից:

Հիմնաբառեր. վերահսկողություն, սոցիալական իրավունքներ, ուժեղ, թույլ, ողջամտության չափանիշ, երկխոսության տեսություն:

Ներածություն

Համաշխարհայնացումը, տեխնոլոգիական զարգացումները, վերջին տարիների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ճգնաժամերը կրկին ակտիվ քննարկումներ են ծավալում սոցիալական ոլորտի զարգացման, հատկապես՝ սոցիալական իրավունքների դերի, գործառույթների, միջազգային և ներպետական իրավական այլ չափանիշների հետ նրանց կապի վերաբերյալ: Նոր մոտեցումների լույսի ներքո պետություններին առաջարկվում է օրենսդրական մակարդակում երաշխավորել համընդհանուր սոցիալական պաշտպանություն յուրաքանչյուրի համար ողջ կյանքի ընթացքում: Հայեցակարգային նման մոտեցումը գիտական քննարկումների առարկա է դարձնում սոցիալական իրավունքների սահմանադրականացման խնդիրը: Հարցն այն է, որ պետությունների սահմանադրություններն այդ իրավունքների նկատմամբ դրսևորում են տարբեր մոտեցումներ: Դրանք ամրագրվում են որպես անհատական իրավունքներ կամ որպես քաղաքական նպատակներ: Երկրորդ՝ գերիշխող մոտեցման դեպքում այդ իրավունքները տարբերվում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներից, որպես կանոն չունեն անմիջական գործողություն, հանդիսանում են սոցիալական ոլորտի երաշխիքներ և չեն առաջացնում մարդու և քաղաքացու համար սուբյեկտիվ իրավունքներ: Սոցիալական իրավունքների ծավալը և բովանդակությունը որոշվում է գերազանցապես օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից:

Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ևս որդեգրեց հայեցակարգային այս մոտեցումը: Սոցիալական որոշ իրավունքներ սահմանազատվեցին հիմնական իրավունքներից, ամրագրվեցին Սահմանադրության 3-րդ գլխում որպես օրենսդրական երաշխիքներ և քաղաքական նպատակներ: Դա նշանակում է, որ վերջիններս չեն առաջացնում հանրային սուբյեկտիվ իրավունքներ և կարող են իրագործվել ու ենթակա լինել դատական պաշտպանության միայն այն բանից հետո, երբ դրանց բովանդակությունն ու ծավալը կհստակեցվի օրենքով (Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, 2016, էջ 39-40):

Բայցևայնպես, սոցիալական իրավունքների սահմանադրականացման հարցը վերջին տասնամյակներին զարգացում է ապրել ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական մակարդակներում: Դրա վառ օրինակներից են «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2008թ. դեկտեմբերի 10-ին ընդունված կամընտիր արձա-

նագրությունը, 1995թ.նոյեմբերի 9-ին ընդունված և 1998թ. ուժի մեջ մտած կոլեկտիվ բողոքների ընթացակարգի վերաբերյալ Եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև՝ նոր սերնդի սահմանադրություններում ամրագրված սոցիալական իրավունքներն ու հատկապես մի շարք երկրների սահմանադրական դատարանների պրակտիկան: Այս զարգացումները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ անձի բնականոն զարգացման ու սոցիալական ներառման համար անհրաժեշտ նվազագույն պայմանների երաշխավորումը, նրա ողջ կյանքի ընթացքում պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սահմանադրական կարգավորման ընդունելի նոր մոտեցումները:

Սույն հոդվածի նպատակն է սոցիալական իրավունքների սահմանադրականացման հարցի վերաբերյալ իրավաբան տեսաբանների կարծիքների և տարբեր երկրների դատական պրակտիկայի ուսումնասիրությունների հիման վրա դուրս բերել առավել շրջանառվող հայեցակարգային մոտեցումները և առաջարկել նշված իրավունքների սահմանադրականացման հնարավոր զարգացումների ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

Մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների և տարբեր երկրների Սահմանադրական դատարանների պրակտիկայի ուսումնասիրության իրավահամեմատական մեթոդի հիման վրա: Սոցիալական իրավունքների սահմանադրականացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների վերլուծության, տեսական դիրքորոշումների վերաիմաստավորման ուղիների նախանշման համար կիրառվել է նաև կառուցողական քննադատության մեթոդը:

Սոցիալական իրավունքների ոլորտում սահմանադրական վերահսկողության հնարավորությունները

Ինչպես արդեն նշել ենք, աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները կրկին առաջ են քաշում քննարկումներ ժամանակակից հասարակության սոցիալական կառուցվածքի վերաբերյալ: Եթե տարիներ առաջ իրավաբան գիտնականներից շատ քչերն էին հետաքրքրված քաղաքական տնտեսագիտության, սոցիալական իրավունքների, հավասարության պահանջների և հանրային ու մասնավոր իրավունքի միջև իրավական կարգավորման փոխկապակցված կառուցակարգերով, ապա ներկայումս իրավիճակն այլ է: Այժմ սոցիալական իրավունքների կարգավիճակի և գործառույթի, ազգային և միջազգային իրավական այլ չափանիշների հետ դրանց փոխհարաբերությունների վերաբերյալ բուռն քննարկումների հետ մեկտեղ հարցադրումներ են արվում առ այն՝ կարո՞ղ է արդյոք սոցիալական իրավունքների իրավական պաշտպանությունն ապահովել արդյունավետ սոցիալական պաշտպանվածություն ժամանակակից ժողովրդավարական պետություններում (O'Conneide, 2021, էջ 1), ինչ չափով պետք է ժողովրդավարական երկրներում գործող

օրենսդրությամբ ամրագրված սոցիալական իրավունքները վերափոխվեն սահմանադրական իրավունքների, ինչ ձև պետք է ունենան այդ դրույթները, և ինչպիսի՞ն պետք է լինի դատարանների դերը տվյալ իրավունքների իրականացման գործում (Wesson, 2012, էջ 221):

Այս հարցերը զգալի ուշադրության են արժանացել համեմատական սահմանադրական գիտության կողմից, և, չնայած տեսության մեջ ու պրակտիկայում առկա իրարամերժ մոտեցումներին ու տարածայնություններին, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա են սահմանադրական կարգավորման մի շարք ընդունելի կառուցակարգեր: Մարկ Տուշնետը, անդրադառնալով դատական համակարգի դերին սոցիալական և տնտեսական իրավունքների ապահովման գործում, ընդգծում է, որ «քննարկումներն այն մասին, թե «արդյո՞ք Սահմանադրությունները պետք է ներառեն նման իրավունքներ, և արդյո՞ք այդ իրավունքները, եթե ներառվեն, պետք է ապահովվեն դատական պաշտպանությամբ, ավարտվել են: Ոչ թե «արդյո՞ք», այլ «ինչպե՞ս»: սա է այն հարցը, որին այժմ բախվում են լուրջ գիտնականներն ու դատավորները» (Tushnet, 2012):

Այս տեսակետից ժամանակակից իրավաբանական խոսույթում (դիսկուրսում) քննարկվում են սահմանադրական վերահսկողության ուժեղ և թույլ տեսակները¹, որոնց համապատասխան էլ առանձնացնում են սոցիալական իրավունքների իրավական պաշտպանության «ուժեղ» և «թույլ» միջոցները (Roach, 2019, էջ 866) : «ուժեղ միջոցները» պարտադիր որոշումներ են, որոնք սահմանում են «կոնկրետ ժամկետներ» և «մանրամասն բացատրում», թե ինչ պետք է անեն պետական պաշտոնյաները: «Թույլ միջոցները», ինչպիսիք են հռչակագրերը կամ պահանջները, առաջարկում են կառավարությանը մշակել ծրագրեր, որոնք խրախուսում են «բանակցություններ վարել կողմերի միջև ծրագրի ավելի մանրամասն ուրվագծերի շուրջ» (Tushnet, 2004, էջեր 248–251):

Թույլ վերահսկողությունը դիտարկվում է երկխոսության տեսությունների լույսի ներքո: Այս տեսություններն ընդգծում են սահմանադրական հարցերի շուրջ դատական և իշխանության մյուս (քաղաքական) ճյուղերի միջև կարծիքների համատեղ փոխանակման կարևորությունը: Դատական վերանայման միջոցով դատարանները նախաձեռնում են քննարկումներ, իսկ վերջին խոսքը տրվում է քաղաքական իշխանություններին: Երկխոսության տեսությունների կողմնակիցները հիմնականում հանդես են գալիս դատական և իշխանության մյուս երկու ճյուղերի միջև սահմանադրական ուժերի որոշակի հավասարակշռության օգտին՝ ընդդեմ դրանցից մեկի գերակայության:

Կողմնակից լինելով սահմանադրական ուժեղ վերահսկողությանը՝ միևնույն ժամանակ գտնում ենք, որ երկխոսության տեսությունները կարող են իրենց դրական ազդեցությունն ունենալ սոցիալական իրավունքների սահմանադրականացման համար: Այս տեսակետից սոցիալական իրավունքների

1 Սույն հոդվածում սահմանադրական վերահսկողության ձևերն ուսումնասիրվում են ոչ թե ընդհանրապես, այլ այնքանով, որքանով որ առնչվում են սոցիալական իրավունքների հետ:

սահմանադրականացմանը վերաբերող առավել քննարկվող մոտեցումները մենք բաժանել ենք 4 մոտեցումների:

Առաջին մոտեցումը հիմնվում է «ողջամտության չափանիշ»-ի վրա, որն իրականացվում է թույլ սահմանադրական վերահսկողության միջոցով: Այստեղ հատկապես աչքի է ընկնում Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանի պրակտիկան:

«Գրուբում»-ի գործում տուժողները, ապրելով սարսափելի պայմաններում, ապօրինաբար զավթել էին էժան բնակարանների համար նախատեսված մասնավոր տարածք, սակայն վտարվել էին այդտեղից և մնացել անօթևան: Նրանք խնդրում էին դատարանին պահանջել Կառավարությունից ապահովել իրենց համապատասխան ժամանակավոր կացարաններով մինչև մշտական բնակարան ստանալը: Սահմանադրական դատարանն, անդրադառնալով այդ խնդրին, նշել է, որ պետությունը պարտավոր է պոզիտիվ քայլեր ձեռնարկել ծայրահեղ աղքատության, անօթևանության կամ անընդունելի բնակարանային պայմաններում ապրողների կարիքները բավարարելու համար, քանի որ «ձեռնարկվելիք միջոցառումների ճշգրիտ ուրվագծումն ու բովանդակության սահմանումը նախևառաջ օրենսդիր և գործադիր իշխանությունների խնդիրն է» (Government of the Republic of South Africa v Grootboom, 2001, (1) SA 41 (CC)):

Դատարանի համար կարևոր էր պարզել՝ արդյո՞ք պետության կողմից ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցները ողջամիտ էին: Դա պայմանավորված էր նրանով, որ միայն բնակարանաշինության պետական ծրագրի առկայությունը դեռ բավարար չէր պետության պարտավորությունները կատարված համարելու համար (պարագրաֆներ 39, 42): Անհրաժեշտ էր, որ պետքի այդ ծրագիրն իրականացվեր ողջամիտ սահմաններում: Այս տեսակետից Սահմանադրական դատարանը բնակարանաշինության պետական ծրագիրը համարեց անհիմն այնքանով, որքանով համարժեք աջակցություն չէր ցուցաբերվում անապահով խավին:

Դա նշանակում է, որ ողջամտությունը պահանջում է, որպեսզի անապահով խավերի համար ծրագրերի մշակումն ու ներդնումը, ինչպես նաև դրանց իրագործման ճշգրիտ ձևերի ու շրջանակի սահմանումն իրականացվի պետության կողմից²: Այն նաև խորացնում է պետական իշխանության հաշվետվողականությունը՝ միաժամանակ չդնելով դատարաններին առաջնային որոշումներ կայացնողների դիրքում (Wesson, 2012, էջ 237): Այսինքն՝ ողջամտության չափանիշը հնարավորություն է տալիս Սահմանադրական դատարանին իրականացնելու թույլ սահմանադրական վերահսկողություն, որի որոշումները ձևական իրավական տեսանկյունից վերջնական չեն (Tushnet, 2003, էջ 2782) և կարող են վերանայվել քաղաքական իշխանությունների կողմից: Նման վերահսկողությունը երկխոսության պայմաններ է ստեղծում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի միջև (Tushnet, 2019, էջ 807), ինչպես նաև հնարավորություն է տալիս կառավարությանը մշակել

2 Խոսայի (Xhosa) գործով Դատարանը ողջամտության չափանիշի մեջ ընդգրկել էր նաև համաչափության չափը (Xhosa v Minister of Social Development 2004 (6) SA 505 (CC)):

համակարգային բարեփոխումներ՝ նվազագույնի հասցնելու առանձին խախտումների կրկնությունը (Roach, 2019, էջ 861):

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Դատարանը «Գրուբբում»-ի գործում մերժեց «անհրաժեշտ նվազագույնի» (minimum core) մոտեցման կիրառումը, ինչը թույլ կտար բոլոր կարիքավորներին ձեռք բերել օգնություն պահանջելու իրավունք: Դատարանը համարեց, որ ինքը չուներ բավարար հնարավորություններ «անհրաժեշտ նվազագույնի» բովանդակությունը որոշելու համար:

Նմանաբովանդակ դիրքորոշում էր արտահայտվել նաև «Բուժման գործողությունների արշավ» (Treatment Action Campaign) գործի շրջանակներում, որտեղ Դատարանը վերահաստատել էր «անհրաժեշտ նվազագույնի» հարցի քննարկման անընդունելիությունը՝ գտնելով, որ դատարանները չունենին ստիտուցիոնալ հիմք իրականացնելու լայնածավալ փաստական և քաղաքական հետաքննություններ՝ որոշելու, թե որոնք պետք է լինեն նվազագույնի բովանդակային չափանիշները (Minister of Health v Treatment Action Campaign 2002 (5) SA 721 (CC), պարագրաֆ 37):

Վերը ներկայացված հիմքերից մեկը կաշառքի շորթումն է: Կաշառքի շորթում ասելով հասկանում ենք հարկադրված փոխանցել կաշառքի առարկան, որպեսզի չոտնահարվեն տվողի իրավունքներն ու օրինական շահերը: Այսինքն՝ պաշտոնատար անձը սպառնում է չկատարել այն գործողությունները, որն օրենքով պարտավոր է կատարել կաշառք տվող անձի օգտին: Հակառակ դեպքում կաշառքի շորթումը բացակայում է. Օրինակ՝ ճանապարհային ոստիկանին գումար է առաջարկում խախտում կատարած վարորդը, որպեսզի կատարված խախտումը չարձանագրի:

Մյուս կարևոր հանգամանքը կամավոր հայտնելն է կաշառքի մասին իրավապահ մարմիններին: Այն կաշառակերության խրախուսական նորմի դրսևորումներից մեկն է: Կամավոր հայտնելը, դա կաշառքի մասին իր կամքով իրավապահ մարմիններին հայտնելն է: Որպեսզի արարքը համարվի կամովին, պետք է ունենա երկու պարտադիր պայման՝ պետք է հայտնի իր ցանկությանը, այլ ոչ թե հարկադրված, և պետք է գիտակցի, որ իրավապահ մարմիններին հայտնի չէ կաշառակերության փաստի մասին: Սակայն, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի, այդ բոլոր գործողությունները պետք է կատարվեն եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրության հիմնական մեթոդներ

Կաշառակերության դեպքերում օրենսդրությունում առկա խրախուսական նորմերին ծանոթանալու, համեմատելու և եզրահանգման գալու համար կա-

տարել ենք ուսումնասիրություն, օգտվելով դիալեկտիկայի, անալիզի, սինթեզի և իրավահամեմատական մեթոդներից:

Արդյունքները

Խրախուսական նորմեր առկա են ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև մի շարք երկրների քրեական օրենսդրություններում: Դրանք համեմատելու համար հարկ ենք համարել անդրադառնալ որոշ պետությունների օրենսդրությունների համապատասխան դրույթներին: Դրանցից են օրինակ՝ ՌԴ-ն, համաձայն որի. «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ակտիվ մասնակցել է հանցանքի բացահայտմանը և/կամ հետաքննությանը և/կամ եթե իր նկատմամբ կատարվել է կաշառքի շորթում պաշտոնատար անձի կողմից, կամ, եթե կամավոր ներկայացել և հայտնել է վարույթն իրականացնող մարմնին» (УК РФ, 1996, հոդվ. 291):

Ըստ Բելառուսի քրեական օրենսգրքի՝ «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե կաշառք տվողը կամավոր դիմել է վարույթն իրականացնող մարմնին և ակտիվ մասնակցել հանցանքի բացահայտմանը և/կամ հետաքննությանը» (УК Беларусь, 1999, հոդվ. 431):

Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին» (УК Казахстан, 2014, հոդվ. 367):

Ղրղըզստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին» (УК Кыргызской Республики, 2017, հոդվ. 328):

Ուզբեկստանի քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածն ունի նույն ձևակերպումն, ինչ Հայաստանի քրեական օրենսգրքում, սակայն ժամկետի այլ սահմանմամբ, այն է. «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան երեսուսորյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն» (УК Узбекистан, 1994, հոդվ. 211):

Հետաքրքրական է նաև Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, որը խրախուսական նորմ է նախատեսում կաշառք ստացողի համար. «Կաշառք ստացողն ազատվում է պատասխանատվությունից, եթե նա գույքը, գույքային իրավունք կամ գույքային բնույթի գործողություն ստանալուց հետո, բայց մինչև համապատասխան գործողության կամ անգործության

կատարումը ինքն ինքնական ներկայանում է վարույթն իրականացնող մարմին և գրավոր հայտնում հանցանքի մասին» (УК Эстонии, 2002, հոդվ. 164): Կաշառք ստացողի հետ կապված, գրականության մեջ քննարկվում է այն կարծիքը, որ ավելի արդյունավետ կլինի կաշառակերության դեմ պայքարում ստացողի նկատմամբ ևս կիրառել խրախուսման միջոց (Папиашвили, 1983, էջ 49, Тумаркина, 2005, էջեր 132-133): «Կաշառք ստացած անձը, ով կապված չէ կաշառքի շորթման հետ, դատարանը ազատում է պատժից, եթե նա ներկայացել է խոստովանական ցուցմունքով, չիմանալով իր կատարած հանցագործության մասին իշխանությունների իմացության մասին, ակտիվորեն նպաստել է դրա բացահայտմանը, վերադարձրել կամ փոխհատուցել է դրա արժեքը» (Постановление Межпарламентской Ассамблеи государств..., 17.02.1996):

Քննարկում

Նշված դրույթի հետ կապված, տարբեր օրենսդրական ձևակերպումներ ներկայացնելուց հետո, կատարենք մի փոքր համեմատական վերլուծություն, կապված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում առկա նորմի ձևակերպման հետ: Գործող օրենսդրության խրախուսական նորմը ենթարկվել է սահմանափակումների, քանի որ ձևակերպման մեջ յուրաքանչյուր գործողություն թվարկվում է «և» շաղկապով, հետևաբար մի գործողությունը բավարար չէ, որպեսզի գործի այս՝ խրախուսական նորմը, այսինքն՝ անձն ազատվի պատասխանատվությունից: Ըստ նորմի, թվարկված բոլոր գործողությունները պետք է կատարվեն անձի կողմից, որպեսզի նա ազատվի քրեական պատասխանատվությունից, թվարկվածներից մեկի բացակայության դեպքում այն չի գործի: Մենք դրական ենք համարում, որ գործող օրենսգրքում՝ ի տարբերություն նախկինի, նախատեսվող գործողությունները ավելացվել են, այսինքն՝ օրենսդիրը լայն հնարավորություն է տալիս անձանց բացահայտելուն ուղղված գործողություններ կատարել և ազատվել պատասխանատվությունից: Սակայն խիստ բացասական ենք համարում, որ թվարկումն իրականացվում է «և» շաղկապով:

Կատարված վերլուծության արդյունքում, հիմնականում ոչ մի պետության օրենսդրության խրախուսական նորմում գործողությունները չեն թվարկվում «և» շաղկապով, այլ «կամ» շաղկապն է օգտագործվում, որը մեծ հնարավորություն է տալիս հանցավորներին կատարել թվարկված գործողություններից գեթ մեկը և ազատվել նախատեսված պատասխանատվությունից, եթե իր կողմից կատարված արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Մեր կարծիքով, հաշվի առնելով կաշառակերության խիստ լատենտայնությունը, բացահայտման բարդությունները, անհրաժեշտ ենք համարում, որպեսզի խրախուսական նորմը կիրառվի թվարկված գործողությունների նույնիսկ մեկի առկայության դեպքում, և թվարկումը կատարվի «և/կամ» շաղկապներով, ինչպես, օրինակ, ՌԴ-ում:

Բացի այդ, օրենսդիրը ներառել է նաև «եռօրյա ժամկետ», որը մեր կարծիքով տրամաբանությունից դուրս է, և նման սահմանափակում չենք հան-

դիպել ուսումնասիրած երկրների օրենսդրություններում, բացառությամբ Ուզբեկստանի: Սակայն Ուզբեկստանի քրեական օրենսդրության դեպքում ժամկետը երեսուն օր է սահմանվում, որը ընդունելի է, իսկ երեք օրը շատ սեղմ ժամկետ է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ արարքը շատ բարդ և քիչ բացահայտվող հանցագործություն է, պետք է լուրջ վերաբերվել և մեծ հնարավորություն տալ անձանց, որպեսզի համագործակցեն և բացահայտեն հանցանքը: Առաջարկում ենք ընդհանրապես բացառել ժամկետի սահմանումը օրենսգրքում: Եթե անձը ներկայացել է կամավոր, բացահայտում է հանցանքի հանգամանքները կամ ցանկացած կերպով օժանդակում է վարույթն իրականացնող մարմիններին, ապա պետք չէ սահմանափակվել որևէ ժամկետով, քանի որ կաշառակերության ցանկացած դեպքի բացահայտում մեծ նշանակություն ունի կաշառակերության դեմ պայքարի գործում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ գոյություն ունի նաև խրախուսական նորմ կաշառք ստանալու դեպքում, այսինքն՝ կաշառք ստացողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Նման օրինակ է Էստոնիայի քրեական օրենսգրքը: Մեր կարծիքով այս տարբերակը ևս կարող է դրական նշանակություն ունենալ կաշառակերության բացահայտման գործում: Այսինքն՝ պարտադիր չէ, որ միայն կաշառք տվողը հայտնի կաշառքի մասին, այն կարող է անել նաև կաշառք ստացողը: Այսպիսով՝ առաջարկում ենք, որ օրենսգրքում ավելացնենք խրախուսական նորմ նաև կաշառք ստացողի համար: Այսինքն՝ այն անձը, ով վերցրել է կաշառքի առարկան, անկախ այն հանգամանքից, նախատեսվող գործողությունը կամ անգործությունը կատարել է, թե ոչ, հանցանքի մասին կամավոր հայտնելու դեպքում ազատվի պատասխանատվությունից:

Հետաքրքրական է, որ նոր քրեական օրենսգրքում նման դրույթ՝ կաշառակերության դեպքերում խրախուսական նորմ, որն ազատում է պատասխանատվությունից, նախատեսված չէ, որը մեր կարծիքով մեծ բացթողում է, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ կաշառակերության զգալի մասը բացահայտվում է հենց անձանց՝ մասնակիցների հաղորդումների հիման վրա: Գիտակցելով, որ կամավոր ներկայանալով կազատվեն քրեական պատասխանատվությունից՝ անձինք զղջալու, վախի կամ այլ շարժառիթներով ներկայանում և բացահայտում են հանցանքը: Առաջարկում ենք, որ նոր օրենսգրքում ևս նախատեսվի նման դրույթ, որը կնպաստի հանցանքների բացահայտմանը:

Եզրակացություն

Խրախուսման միջոցները այն դրույթներն են, որոնք վարույթն իրականացնող մարմինն հնարավորություն են տալիս, ցանկացած հանցագործության դեպքում, բացահայտել հանցագործությունը: Հաշվի առնելով քննարկվող հանցանքների հանրային վտանգավորությունը, բացահայտման բարդությունները, կաշառակերության մեջ այն ունի խորքային նշանակություն, ելնելով այն հանգամանքից, որ հիմնականում բացահայտվում են կաշառակերության դեպքերը կամավոր հայտնության հիման վրա, գիտակցելով, որ

կազատվեն քրեական պատասխանատվությունից: Այն տարածված մեթոդ է, և դա է վկայում արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, որոնց մի քանիսին անդրադարձանք հողվածում: Պետք է ուշադրություն դարձնել նաև նորմի ձևակերպմանը, քանի որ ցանկացած տառ կարող է էական նշանակություն ունենալ, այն է՝ տվյալ դրույթը, որի մեջ պետք է օգտագործել ոչ թե «և», այլ «կամ» շաղկապը: Բացի այդ, վերացնել նաև այդ ժամկետային սահմանափակումները, որը չնկատեցինք այլ երկրի օրենսդրություններում: Եվ կարծում ենք, որ տվյալ դրույթների ամկայությունը պարտադիր պետք է լինի, հատկապես նման՝ դժվար բացահայտվող հանցագործությունների դեպքում:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգիրք* (ընդունվել է 05.05.2021թ.): Միասնական կայք 2021.05.17–2021.05.30 Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080> (մուտք՝ 17.02.22)
- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք* (ընդունվել է 18.04.2003թ.): ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159328> (մուտք՝ 17.02.22)
- Постановление Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств* от 17.02.1996, <http://www.iacis.ru/upload/iblock/753/019.pdf>. (մուտք՝ 17.02.22)
- Папиашвили, Ш. Г. (1983). *Проблема должностных преступлений и борьбы с ними по советскому уголовному праву и судебной практике* (По материалам Грузинской ССР): Автореф. дис... д-ра юрид. наук. Тбилиси.
- Тумаркина, Л. П. (2005). *Коммерческий подкуп*. М. *Уголовный кодекс Российской Федерации* от 13.06.1996 N 63-ФЗ (ред. от 30.12.2021) http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք՝ 17.02.22)
- Уголовный Кодекс Республики Беларусь* от 9 июля 1999 г. № 275-3 <https://xn--ctbcgfviccvibf9bq8k.xn--90ais/> (մուտք՝ 17.02.22)
- Уголовный кодекс Республики Казахстан* от 3 июля 2014 года № 226-V (с изменениями и дополнениями по состоянию на 10.01.2022 г.). https://online.zakon.kz/m/document/?doc_id=31575252 (մուտք՝ 17.02.22)
- Уголовный кодекс Кыргызской Республики* от 28 октября 2021 года № 127. <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/112309> (մուտք՝ 17.02.22)
- Уголовный кодекс Республики Узбекистан* (утвержден Законом Республики Узбекистан от 22 сентября 1994 года. https://online.zakon.kz/Document/?doc_id=1005029 (մուտք՝ 17.02.22)
- Уголовный кодекс Эстонской Республики (2001, с изменениями от 2002). https://www.legislationline.org/download/id/6462/file/Estonia_CC_as_of_2002_ru.pdf (մուտք՝ 17.02.22)
- Цагикян, С.Ш. (2006). *Противодействие коррупции в Армении*» Санкт-Петербург.

References

- Hayastani Hanrapetutyany qreakan nor orensiriq* (yundunvel e 05.05.2021). [New Criminal Code of the Republic of Armenia.]. Miasnakan kayk 2021.05.17–2021.05.30 Pashtonakan hrarakman ory 27.05.2021 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080> (accessed: 17.02.22) (In Arm.)
- Hayastani Hanrapetutyany qreakan orensiriq* (yundunvel e 18.04.2003). H0–528–N. [Criminal Code of the Republic of Armenia], HHPT 2003.05.02/25(260) Hod.407 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159328> (accessed: 17.02.22) (In Arm.)
- Postanovlenie Mezhparyamentsoy Assamblei gosudarstv – uchastnikov Sodruzhestva Nezavisimykh Gosudarstv* ot 17.02.1996: [Resolution of the Inter-Parliamentary Assembly of States – Members of the Commonwealth of Independent States of 17.02.1996] <http://www.iacis.ru/upload/iblock/753/019.pdf> (accessed: 17.02.22) (In Rus.)
- Papiashvili, Sh.G. (1983). *Problema dolzhnostnykh prestupleniy i bor'by s nimi po sovetskomu ugolovnomu pravu i sudebnoy praktike (Po materialam Gruzinskoy SSR)* [The problem of malfeasance and the fight against them in Soviet criminal law and judicial practice (Based on the materials of the Georgian SSR)]. Avtoref. dis... d-ra yurid. nauk.Tbilisi. (In Rus.)
- Tumarkina, L. P. (2005). *Kommercheskiy podkup* [Commercial bribery]. M. (In Rus.)
- Ugolovnyy kodeks Rossiyskoy Federatsii* [Criminal Code of the Russian Federation] ot 13.06.1996 N 63–FZ (red. ot 30.12.2021). http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (accessed: 17.02.22) (In Rus.)
- Ugolovnyy Kodeks Respubliki Belarus'* [Criminal Code of the Republic of Belarus] ot 9.07.199 <https://xn——ctbcgfviccvibf9bq8k.xn—90ais/> (accessed: 17.02.22) (In Rus.)
- Ugolovnyy kodeks Respubliki Kazakhstan* [Criminal Code of the Republic of Kazakhstan] ot 3 iyulya 2014 goda № 226–V (s izmeneniyami i dopolneniyami po sostoyaniyu na 10.01.2022) https://online.zakon.kz/m/document/?doc_id=31575252 (accessed: 17.02.22) (In Rus.)
- Ugolovnyy kodeks Kyrgyzskoy Respubliki* [Criminal Code of the Kyrgyz Republic] ot 28 oktyabrya 2021 goda № 127 <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/112309> (accessed: 17.02.22) (In Rus.)
- Ugolovnyy kodeks Respubliki Uzbekistan* [Criminal Code of the Republic of Uzbekistan] (utverzhen Zakonom Respubliki Uzbekistan ot 22 sentyabrya 1994 goda) https://online.zakon.kz/Document/?doc_id=1005029 (accessed: 17.02.22) (In Rus.)
- Ugolovnyy kodeks Estonskoy Respubliki* [Criminal Code of the Republic of Estonia] (2001, s izmeneniyami ot 2002) https://www.legislationline.org/download/id/6462/file/Estonia_CC_as_of_2002_ru.pdf (accessed: 17.02.22) (In Rus.)
- Tsagikyan, S.Ts. (2006). *Protivodeystvie korruptsii v Armenii* [Combating Corruption in Armenia]. St. Petersburg.

Степан Цагикян

*Профессор кафедры уголовного права Российско–Армянского (Славянского)
университета, доктор юридических наук, профессор,
Эл. адрес: stepanshant@mail.ru*

Седа Оганнисян

*Магистр кафедры уголовного права и уголовно–процессуального права
института права и политики Российско–Армянского (Славянского)
университета
Эл. адрес: seda.hovhannisyan98@mail.ru*

ОСВОБОЖДЕНИЕ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВИДЫ ВЗЯТОЧНИЧЕСТВА КАК СРЕДСТВО ПООЩРЕНИЯ

Статья посвящена поощрительным нормам в формулировках состава преступлений о взяточничестве, которые предусмотрены не только законодательством Республики Армения, но и другими государствами. Наличие такой статьи позволяет преступникам добровольно сообщать о преступлении, помогать органам прокуратуры и освобождаться от ответственности. Проведен анализ соответствующего положения, касающегося формулировки. Изучены, проанализированы и сопоставлены с соответствующей нормой УК РА сходственные нормы поощрений к освобождению от ответственности по делам о коррупции в уголовных кодексах разных стран. По обсуждаемым вопросам были представлены мнения и предложения по формулировке нормы, отмене сроков и ряд других положений. В частности, автор считает, что в поощрительной норме не следует употреблять союз «или».

Ключевые слова: взяточничество, побудительная норма, латентность, добровольное волеизъявление, ответственность, взяточничество.

Stepan Tsagikyan

*Lecturer at Criminal Law and Criminal Procedure Law Chair,
Law and Politics Faculty, Armenian–Russian (Slavonic) University,
Doctor of Law, Full Professor,
Email: stepanshant@mail.ru*

Seda Hovhannisyan

*MA Student at Criminal Law and Criminal Procedure Law Chair,
Law and Politics Faculty, Armenian–Russian (Slavonic) University,
Email: seda.hovhannisyan98@mail.ru*

**EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY FOR TYPES OF BRIBERY AS
A MEANS OF INCENTIVE**

The article is devoted to incentive norms in the wording of the corpus delicti of bribery crimes. This is stipulated not only by the legislation of the Republic of Armenia, but also outside its territory. This allows criminals to voluntarily report a crime, assist to the bodies conducting the proceedings and be exempt from liability. An analysis of the relevant provision regarding wording has been carried out. The relevant norms of incentives for exemption from liability in cases of corruption in the criminal codes of different countries have been studied and compared to the relevant norm of the Criminal Code of the Republic of Armenia. We have also referred to the New Criminal Code where this provision is absent. Opinions, proposals on the wording of the norm, elimination of time limits, and several other provisions were presented on the issues under discussion. In particular, the author believes that the conjunction “or” should not be used in the incentive norm.

Key words: bribery, incentive norm, latency, voluntary expression of will, responsibility, bribery.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2022թ. մարտի 9-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2022թ. մարտի 15-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2022թ. ապրիլի 21-ին:

Գագիկ Վարդանյան

*Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարման և
ՏՏ ամբիոնի պրոֆեսոր, Կոնսուլտանտական ընկերություն
Էլ. հասցե՝ gagik.v.@yahoo.com*

Դավիթ Վարդանյան

*«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի հաճախորդների սպասարկման թիմի
ղեկավար, Հայաստանի եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնի
դասախոս, Կոնսուլտանտական թեկնածու
Էլ. հասցե՝ vardanyandg@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2022.1-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ. ՌԻՍԿԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐ

Տնտեսական աճի համար պահանջվում են ներդրումներ, որոնք կարող են ֆինանսավորվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին և որոնց համար հիմք են հանդիսանում համապատասխանաբար՝ ներքին և արտասահմանյան խնայողությունները: Խնայողությունների ցածր մակարդակ ունեցող զարգացող երկրները, ներքին ներդրումների ֆինանսավորման համար դիմում են արտաքին աղբյուրներին, որոնք հաճախ կապված են լինում որոշակի ռիսկերի և սահմանափակումների հետ: Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերջին տարիների զարգացումները, հանգեցնելով անորոշությունների մեծացմանը, առաջացրել են ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների նոր ռիսկեր և սահմանափակումներ, որոնց ուսումնասիրությունը կարևորվում է ազգային տնտեսությունների, այդ թվում ՀՀ տնտեսության համար առաջացած մարտահրավերներին պատրաստ լինելու և համարժեք արձագանքելու տեսանկյունից:

Հողվածում փորձ է արվել բացահայտել ՀՀ-ում ներդրումների ֆինանսավորման արտաքին այնպիսի աղբյուրի հետ առնչվող ռիսկերը և սահմանափակումները, ինչպիսին են օտարերկրյա ուղղակի ներդրումները: Բացահայտվել է, որ, չնայած, 2021 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումների համաշխարհային հոսքերը վերականգնվել են մինչև նախահամավարակային մակարդակը, այնուամենայնիվ, նման զարգացումներ տեղի չեն ունեցել զարգացող երկրների արդյունաբերության նոր նախագծերում, ինչը վերաբերում է նաև Հայաստանին: Եզրակացվել է, որ ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերը և սահմանափակումները կարող են խնդիրներ առաջացնել ՀՀ հետագա տնտեսական աճի համար: Որպես դրանց հաղթահարման ուղի է դիտվել, ՀՀ մրցակցային դիրքի բարելավումը, ՕՈՒՆ-ի ներգրավման առումով, առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավորումների այս ժամանակաշրջանում դրանցում ՀՀ-ի ներգրավվելը՝ տեխնոլոգիայի կլանման երկրի տնտեսության կարողության բարձրացման, տնտեսության նոր հատվածների ձևավորման խթանման ճանապարհով:

Հիմնաբառեր. տնտեսական աճ, ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), առաքման համաշխարհային շղթաներ, ՕՈՒՆ-ի վրա համավարակի ազդեցություն:

Ներածություն

XX դարի երկրորդ կեսին համաշխարհային տնտեսության բացության և միասնականության աստիճանի բարձրացումը, ինչն արագ աճող տնտեսություններին հնարավորություն ընձեռեց ներմուծել գաղափարներ, տեխնոլոգիաներ և «նոր-հառու» գիտելիքներ մնացած աշխարհից, նպաստեց տնտեսական տևական և բարձր աճին հասնելուն: «Այդ գիտելիքների ստացման կապուղիներից մեկն օտարերկրյա ուղղակի ներդրումներն են, որոնք ակտիվորեն ներգրավել են աճի բարձր տեմպերով մի քանի եկրներ, իսկ մյուսն արտասահմանյան կրթությունն է, որը հաճախ ստեղծում է կայուն միջազգային ցանցեր» (Commission on Growth and Development, 2008, էջ 2):

Ինչպես տնտեսական աճն է կախված ներդրումներից, այնպես էլ ներդրումները կախված են դրանք ֆինանսավորելու երկրի կարողությունից՝ սեփական խնայողություններից կամ արտաքին աղբյուրներից: Ներքին խնայողությունների ցածր մակարդակ ունեցող զարգացող երկրները ներքին ներդրումների ֆինանսավորման համար դիմում են արտաքին աղբյուրներին, որոնք հաճախ կապված են լինում որոշակի ռիսկերի և սահմանափակումների հետ: Նոր տնտեսակարգին անցման ժամանակահատվածում ՀՀ կառավարությունը նույնպես քայլեր է ձեռնարկել արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու համար: Մինչդեռ վերջին տարիների զարգացումները՝ կապված 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի, համաշխարհային

տնտեսության վրա COVID-19 համավարակի ազդեցության հետ, հանգեցրել են ներդրումների հոսքերի անկմանը: Նշանակալի մեծացած անորոշությունների պայմաններում առաջացել են ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված նոր ռիսկեր և սահմանափակումներ:

2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամին հաջորդած տարիներին ՕՈՒՆ-ի ներհոսքը ՀՀ դրսևորեց խիստ նվազման միտումներ, իսկ COVID-19 համավարակի ազդեցությամբ՝ 2020 թ. անկումը կազմեց 54% (World Investment Report, 2021, էջ 251): Համավարակի առաջացրած ճգնաժամի հաղթահարման համար առաջավոր երկրների միջոցառումներում ներառվել են նոր սահմանափակումներ, իսկ առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավորումները փոխում են ներդրումների լանդշաֆտը:

Վերջին տասնամյակում, ՕՈՒՆ-ի ներհոսքի խիստ նվազման դրսևորված միտումները, ինչպես նաև ներքին խնայողությունների, որպես ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուրի, մակարդակի անկումը պայմանավորել են տնտեսական աճի ցածր և ոչ կայուն տեմպերի պատճառ հանդիսացող հիմնական կապիտալի համախառն կուտակման մակարդակի (ՀՆԱ-ի նկատմամբ %) անկումը, 2008 թ. ի վեր. 2008 թ.՝ 47%, 2021 թ.՝ 17% (World Development Indicators):

Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերջին տարիների զարգացումները, հանգեցնելով անորոշությունների մեծացմանը, առաջացրել են ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների նոր ռիսկեր և սահմանափակումներ, որոնց ուսումնասիրությունը կարևորվում է ազգային տնտեսությունների, այդ թվում ՀՀ տնտեսության համար առաջացած մարտահրավերներին պատրաստ լինելու և համարժեք արձագանքելու տեսանկյունից: Հողվածի նպատակն է ՀՀ-ում ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերի և սահմանափակումների բացահայտումը:

Մեթոդաբանություն և տվյալներ

Ներքին ներդրումների ֆինանսավորման աղբյուրների հետ կապված ռիսկերի և սահմանափակումների բացահայտման նպատակով՝ դիտարկվել են ՀՀ ներհոսած ՕՈՒՆ-ի միտումները, դրանք պայմանավորող համաշխարհային զարգացումները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ՕՈՒՆ-ի համաշխարհային հոսքերի վրա 2008 թվականի տնտեսական ճգնաժամի և 2019 թվականի COVID-19 համավարակի ազդեցությանը և այդ համատեքստում դիտարկվել են ՀՀ ՕՈՒՆ-ի ներհոսքի միտումները: Նկատի ունենալով, որ աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական անորոշությունը միջնաժամկետ հեռանկարում գերիշխելու է ներդրումային լանդշաֆտում, անդրադարձ է կատարվել համաշխարհային տնտեսության վրա COVID-19 համավարակի և առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավորումների ազդեցության, մեծացած անորոշությունների պայմաններում ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերին և սահմանափակումներին: Թեպետ Կառավարության

պարտքի ֆինանսավորումն արտաքին աղբյուրներից նույնպես ներքին ներդրումների (պետական) աղբյուր է, սույն հոդվածում այդ խնդրին անդրադարձ չի կատարվել: Նույնը վերաբերում է արտասահմանից անձնական տրանսֆերտներին:

Վերլուծությունները կատարվել են ՀՀ վիճակագրության կոմիտեի և UNCTAD-ի զեկույցներում պարունակող տվյալների, Համաշխարհային բանկի տվյալների բազայի (World Development Indicators) հիման վրա:

Արդյունքներ և քննարկում:

Զարգացող երկրների տնտեսությունների կայուն և տևական աճի համար, համաձայն նոր դասական տեսությունների, որոշիչ նշանակություն ունեն խնայողությունները և ներդրումները: Տնտեսական զարգացման գերիշխող տեսությունը «կապիտալի ֆունդամենտալիզմն» է, որի հիմքում գտնվող այս գաղափարը ծագում է Ե.Դոմարի (Domar, 1957, էջ 26) և Ռ. Հարոդի (Harrod, 1960, էջ 279) այն պնդումից, որ աճի տեմպերը խնայողությունների մակարդակի և արտադրանք/կապիտալ հարաբերակցության արդյունք են: Տնտեսական աճի Ռ. Սոլոուի (Solow, 1956, էջ 65) մոդելում խնայողությունները դիտարկվում են որպես կապիտալի կուտակման, տնտեսական աճի ապահովման առաջնային տարր:

Ինչպես տնտեսական աճն է կախված ներդրումներից, այնպես էլ ներդրումները կախված են դրանք ֆինանսավորելու երկրի կարողությունից՝ սեփական խնայողություններից կամ արտաքին աղբյուրներից: Վերջինը, սակայն, ունի սահմանափակումներ և ռիսկային է (Commission on Growth and Development, 2008, էջ 54):

Ելնելով շուկայական տնտեսությանն անցման արագացման և երկրի տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, տնտեսության մրցունակության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեցող ներդրումների անհրաժեշտությունից, հաշվի առնելով դրանց ֆինանսավորման ներքին աղբյուրների սահմանափակ լինելը և կարևորելով արտաքին ֆինանսավորման աղբյուրներից ներդրումների ներհոսքը, դեռևս 1994 թ. ընդունվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը: Օրենքով սահմանվել են ՀՀ տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման, իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը: Ըստ էության, օրենքի գործողությունն ապահովել է որոշակի արդյունքներ՝ կապված օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների ներգրավման հետ: Այսպես, օրենքի ընդունմանը հաջորդող 6 տարիներին ՕՈՒՆ-ի ներհոսքը ՀՀ կազմել է տարեկան միջինը 85.5 մլն դոլար, իսկ դրանց պաշարները 2000 թ. կազմել են 513 մլն. դոլար, 2010 թ.՝ 4405 մլն. դոլար (2001-2010 թթ. միջին տարեկանը՝ 389.2 մլն. դոլար), 2021 թ. 5363 մլն. դոլար (2011-2021 թթ. միջին տարեկանը՝ 87.1 մլն դոլար) (World Investment Report, 2021, էջ 255): Ակնհայտորեն, ՕՈՒՆ-ի ներհոսքը, դրանց ոլորտային կառուցվածքը բավարար չեն եղել օրենքով սահմանված նպատակներին հասնելու համար: Դրանց մեծ մասն ի սկզբանե միտված չեն եղել օրենքով ամրագրված դրույթի՝ «առաջավոր

տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպական փորձի ներդրման ու արդյունավետ օգտագործման նախադրյալներ» ստեղծելուն, նկատի ունենալով ոլորտները, որտեղ ուղղվում էր ներդրումների մեծ մասը (հանքարդյունաբերության կամ ենթակառուցվածքային որոշ ոլորտներում): Թերևս, բացառություն կարող է համարվել ՏՀՏ ոլորտը, որտեղ ներհոսած օտարերկրյա ներդրումները ստեղծել են նշված նախադրյալները: Այնուամենայնիվ, նույնիսկ այն պարագայում, երբ դեռևս 2001 թ. ՀՀ Կառավարությունն այդ ոլորտը հայտարարեց գերակա, այն, չդարձավ երկրի տնտեսության լոկոմոտիվը, ավելին, ՀՆԱ-ի արտադրության մեջ այդ ոլորտի մասնաբաժինը 2021 թ. կազմել է ընդամենը 3.8% (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022, էջ 277): Թեև նշանակալի կարող է համարվել ՏՀՏ ոլորտի արտահանման ծավալների աճի տեմպերը 1993–2020 թթ. Ժամանակահատվածում (19.4 անգամ) (World Development Indicators), այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ 1990–ականներին ոլորտի բազան եղել է բավական փոքր:

Անկախացումից ի վեր ՀՀ-ում հնարավոր է եղել ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր միայն 2001–2007 թթ. Ժամանակահատվածում, երբ միջին տարեկան տնտեսական աճը կազմեց 12.4%: Դրան նպաստել են տարբեր գործոններ, որոք հետագայում կորցրել են իրենց որոշիչ ազդեցությունը: Այդպիսի գործոններից է հանդիսացել ՕՌԻՆ-ը: Երեք տասնամյակի ընթացքում դրանք զագաթնակետին են հասել 1998 թ.՝ կազմելով ՀՆԱ-ի 12.3%-ը: 1998–2010 թթ. Ժամանակահատվածում ՕՌԻՆ-ի ներհոսքի միջին տարեկան ցուցանիշը կազմել է ՀՆԱ-ի 6.75%-ը, 2001–2007 թթ.՝ 5.7%-ը: 2001–2007 թթ. Ժամանակահատվածում ներհոսքը կազմել է 1 մլրդ. 977 մլն. դոլար կամ 2021 թ. դրությամբ ներհոսած ՕՌԻՆ-ի պաշարների 35.1%-ը (World Investment Report, 2000–2022): Այդ կարճատև Ժամանակահատվածում գրանցված երկնիշ աճն անշրջելի չդարձրեց տնտեսական զարգացումը, արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ՝ ՕՌԻՆ-ով չապահովեց ներդրումների կայուն բարձր մակարդակ, չձևավորվեցին տնտեսության կայուն բարձր և տևական աճի նախադրյալներ, ինչը հաջողվել է անել տասնյակ երկրների, որտեղ 20–25 տարի շարունակ գրանցվել է բարձր աճ:

Վերջին երկու տասնամյակում համաշխարհային տնտեսության հատվածների մեծ մասում բարձրացել է ռիսկերի մակարդակը, ինչը պայմանավորված է զարգացած երկրներում ֆինանսական օրենսդրության ազատականացմամբ, համաշխարհային ֆինանսական շուկայի ծավալների սրընթաց աճով և ֆինանսական գլոբալացումով: Այդ ամենը հանգեցրել է ֆինանսական շուկայի հիմնական գնային ցուցիչների (փոխարժեքների, տոկոսադրույքների, արժեթղթերի գնանշման և այլն) տատանողականության մեծացմանը, որոնք ֆինանսական ռիսկերի կարևոր աղբյուրներ են: Սա հատկապես ակնհայտ էր 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի Ժամանակ, երբ փոխարժեքների և արժեթղթերի գնանշումների տատանումները հանգեցրին բազմաթիվ ընկերությունների և բանկերի սնանկացման, ինչն էլ պայմանավորեց, մասնավորապես, ՕՌԻՆ-ի համաշխարհային հոսքերի հետագա բացասական միտումները:

2000-ական թվականներին, որպես ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուր, ՀՀ տնտեսության համար առանձնահատուկ նշանակություն է ունեցել ՕՌԻՆ-ը, սակայն դա բավարար չի եղել երկրի կայուն բարձր և տևական աճի նախադրյալներ ստեղծելու համար: Միաժամանակ, ՕՌԻՆ-ի համաշխարհային հոսքերի միտումների ազդեցությամբ¹, ՕՌԻՆ-ի ներդրող ՀՀ խիստ բացասական միտումներ է դրսևորել դեռևս 2009 թվականից: Դրանք էլ ավելի ուժգնացան COVID-19 համավարակի ազդեցությամբ: 2019 թ. համեմատ, 2020 թ. անկումը կազմեց 54%, ինչում էական ազդեցություն է ունեցել նաև ՕՌԻՆ-ի համաշխարհային հոսքերի նշանակալի անկումը. 2020 թվականի անկումը կազմեց 35% (World Investment Report, 2007, էջ 248):

Ուշագրավ է, որ 2008 թ. ՕՌԻՆ-ի համաշխարհային ներհոսքի անկումը կազմել է 15.7%, 2009 թ.՝ 17.1%: Մինչդեռ ՀՀ-ում հավելվածը նախորդ 2007 թ. համեմատ կազմել է 71.2%: Հետագա տարիներին, այնուամենայնիվ, սկսել է զգացվել համաշխարհային միտումների ազդեցությունը: Ընդ որում, նշանակալի են եղել ՌԴ-ից ներհոսած ներդրումները: Այսպես, օրինակ, 2007 թ. դրանք կազմել են 293.2 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ներհոսքի 44.4%-ը), 2008 թ.՝ 714.5 մլն դոլար (ընդհանուր ներհոսքի 63.2%-ը) (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009, էջ 72-73), 2009 թ.՝ 384.3 մլն դոլար (ընդհանուր ներհոսքի 45.7%-ը) (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2010, էջ 71): Ճգնաժամի տարիներին երկրորդ խոշոր ներդրողը եղել է Ֆրանսիան. 2008թ.՝ 83.7 մլն ԱՄՆ դոլար, 2009 թ.՝ 197.4 մլն ԱՄՆ դոլար: 2009 թ. ներհոսած ՕՌԻՆ-ի 20.7%-ը (2008 թ.՝ 47.6%) բաժին է հասել «էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում» ոլորտին, 20.3%-ը՝ «ցամաքային տրանսպորտի գործունեություն» (2008 թ.՝ 13.6%) և 34.6%-ը՝ կապի (2008 թ.՝ 18.5%) ոլորտներին: Հետագա տարիներին ներդրումների նման պատկեր այլևս չի հանդիպում: Այսպես, օրինակ, 2018 թ. Ռուսաստանից ներհոսած ՕՌԻՆ-ը կազմել է 60.2 մլն. ԱՄՆ դոլար, 2019-ին՝ 15.8 մլն. ԱՄՆ դոլար, 2020-ին՝ ՌԴ-ից զուտ հոսքերը եղել են բացասական և կազմել են -46.9 մլն. դոլար: Հարկ է նշել, որ ՀՀ ներհոսած ՕՌԻՆ-ի մաքուր պաշարների 51.1%-ը ռուսաստանյան են: Փաստորեն, ֆինանսական կախվածությունը բարձր է եղել ՌԴ-ից:

Արտաքին ֆինանսավորման աղբյուրների ոչ դիվերսիֆիկացված լինելը խիստ մեծ ռիսկեր է պարունակում, որոնք տարբերվում են իրենց բնույթով: Նկատի ունենալով ձևավորված միտումները, ինչպես նաև աշխարհաքաղաքական վերջին զարգացումները, ռուս-ուկրինական ռազմական բախումը, որոնք հանգեցրել են ՌԴ-ի նկատմամբ 2014 թվականից սահմանված տնտեսական պատժամիջոցներին նորերի ավելացմանը, ներքին ներդրումների ֆինանսավորման այդ աղբյուրը դարձել է խիստ ռիսկային: Այսպես, 2014 թվականին, երբ ՌԴ-ի դեմ սահմանվեցին տնտեսական պատժամիջոցներ, ՕՌԻՆ-ի ներհոսքն այդ երկրից կազմել էր 257.4 մլրդ դրամ, իսկ զուտ ներհոսքը՝ 42.6 մլրդ դրամ (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2015 թ. հունվար-

¹ 2007 թ. ՕՌԻՆ-ի ներհոսքն ամբողջ աշխարհում կազմել է 2.1 տրիլիոն ԱՄՆ դոլար, 2006 թվականից 60.8%-ով ավելի (World Investment Report 2007, էջ 251)


փետրվար, էջ 82), 2015 թ. համապատասխանաբար՝ 35.9 մլրդ դրամ և -6.6 մլրդ դրամ (ՀՀՄՏՎ, 2016 հունվար-փետրվար, էջ 80): Պատկերը որոշակի բարելավվել է 2022 թ. առաջին կիսամյակում. ՌԴ-ից ՕՌԻՆ-ի ներհոսքը կազմել է 57.5 միլիարդ դրամ (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2022 թ. հունվար-հունիսին, էջ 114): Միաժամանակ, ՀՀ-ում առաջացած ներքին քաղաքական խնդիրները և տարածաշրջանում անկայուն, պատերազմական վիճակը նույնպես կարող են դիտվել որպես ՕՌԻՆ-ի ներհոսքի զսպման գործոններից մեկը:

Բացի նման զարգացումներից, հարկ է նկատել, որ ՕՌԻՆ-ի համաշխարհային հոսքերի բաշխման մեջ որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել 2019 թ. համավարակի առաջացրած ձգնաժամին հաջորդող ժամանակահատվածում: Այսպես, օրինակ, եթե 2007 թ. զարգացած երկրների մասնաբաժինն ընդհանուր հոսքերում կազմել է 68.7%, ապա 2020 թ. այն կազմել է 31.2%: Հակառակը, զարգացող երկրների մասնաբաժինը 2007 թ. 26.9%-ից հասել է 66.3%-ի: Անցումային տնտեսությունների մասնաբաժինը 2007 թ. կազմել է 4.3%, իսկ 2020 թ.՝ 2.4%: Եթե 2007 թ. ՀՀ մասնաբաժինը կազմել է անցումային տնտեսություններ ներհոսած ՕՌԻՆ-ի 0.73%-ը, ապա 2020 թ. այն նվազել է՝ հասնելով 0.49%-ի², այն էլ երկրների այդ խմբի մասնաբաժնի նշանակալի անկման պարագայում: Այսպիսով, 2008 թ. ֆինանսական ճգնաժամը և 2019 թ. համավարակը հանգեցրել են ՕՌԻՆ-ի համաշխարհային հոսքերի ոչ միայն անկման միտումների առաջացմանը, այլև լանդշաֆտի էական փոփոխություններին:

Հարկ է նշել, որ անցած երեք տասնամյակների ընթացքում ՀՀ ներհոսած ՕՌԻՆ-ի նշանակալի մասն ուղղվել է ենթակառուցվածքներին, հանքարդյունաբերությանը: Անշուշտ, ենթակառուցվածքները կարևոր են տնտեսական զարգացման համար, բայց տնտեսական աճի արագացման առումով պահանջվում են առաջավոր տեխնոլոգիաներ և արտադրողական գիտելիքներ («տու-հաու») փոխանցող, թեկուզև ոչ մեծածավալ, ներդրումներ տնտեսության իրական հատվածի մյուս ոլորտներում, հատկապես մշակող արդյունաբերության մեջ:

2022 թ. World Development Report-ում ասվում է, որ «թեպետ ձգնաժամը անմիջական ազդեցություն ունեցավ ոչ միայն տնային տնտեսությունների և ընկերությունների եկամուտների վրա, այդ խոշոր ցնցման հետևանքներն անդրադառնում են ամբողջ տնտեսության վրա՝ բազմաթիվ փոխադարձ ուժգնացնող կապուղիներով, որոնք կապում են տնային տնտեսությունների և ընկերությունների, ֆինանսական հաստատությունների և կառավարությունների ֆինանսական դրությունը» (գծապատկեր 1):


2 World Investment Report 2022-ում արդեն առանձնացված չէ «Transition economies» երկրների խումբը:



Գծապատկեր 1. Հայեցակարգային շրջանակ. Փոխկապակցված հաշվեկշռային ոլիսկերը (Աղբյուր՝ World Development Report, 2022, էջ 3)

ՀՀ-ում համավարակը նշանակալի բացասական ազդեցություն է ունեցել տնային տնտեսությունների վրա: Նրանց վերջնական սպառման ծախսերը նշանակալի գերազանցել են տնօրինվող եկամուտներին (գծապատկեր 2), ինչը հետագայում էլ ավելի մեծ չափով կանդրադառնա պետական եկամուտների, ֆինանսական կազմակերպությունների վրա: Մասնավորապես, տնային տնտեսությունների ծախսերի գերազանցումը (2019 թվականին՝ -1548.3 միլիարդ դրամ)³ նրանց եկամուտներին հանգեցրել է խնայողությունների բացասական մակարդակի էլ ավելի վատթարացմանը: Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, տևական ժամանակ պահպանվում է տնային տնտեսությունների խնայողությունների բացասական մակարդակը, ինչն այդ մասով նվազեցնում է ներքին աղբյուրների հաշվին ներքին ներդրումների ֆինանսավորման հնարավորությունը:

3 Հնարավոր վերջին տվյալը



Գծապատկեր 2. Տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտները, վերջնական սպառման ծախսերը և խնայողությունները (աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվներ)

ՕՈՒՆ-ի համաշխարհային հոսքերի վրա համավարակի ազդեցությունը դրսևորվել է հատկապես դրանց բոլոր բաղադրիչների մասով. Նոր նախագծեր, անդրսահմանային միաձուլումներ և կյանումներ (M&As), որոնք միասին հանգեցրել են բաժնետիրական կապիտալում 50%-ով հոսքերի նվազելուն: Վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) շահույթի միջինը 36%-ով նվազելը հանգեցրել է օտարերկրյա մասնաձուլների կողմից իրականացվող վերաներդրումների նվազելուն, ինչը նշանակում է, որ անկումն ավելի մեծ է եղել: Չնայած 2020 թ. անդրսահմանային M&As-երի և միջազգային նախագծերի ֆինանսավորման նշանակալի վերականգնմանը, այդուհանդերձ, զարգացող երկրների համար կարևոր «greenfield» նախագծերը պահպանել են բացասական միտումները (World Investment Report, 2021, էջ 3):

Համաշխարհային մասշտաբով և ազգային տնտեսությունների բնականոն գործունեության տևական խափանումները և համաշխարհային ռեցեսիայի հեռանկարը հանգեցրել են այն բանին, որ ՎԱԿ-երը ստիպված են վերանայել ներդրումային նախագծերը: Հակաձգնաժամային միջոցառումները ներառել են ներդրումային նոր սահմանափակումներ: Ըստ UNCTAD-ի կանխատեսումների՝ երկարաժամկետում ներդրումները դանդաղ կվերականգնվեն 2022 թվականին, որոնց առաջ կնդեն արժեքի ստեղծման գլոբալ շղթաների (GVC) վերադասավորումները՝ դիմադրողականության, կապիտալի համալրման և համաշխարհային տնտեսության վերականգնման համար (World Investment Report, 2021, էջ 2):

Գծապատկեր 3-ում ներկայացված փոխանցման մեխանիզմը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել ՕՈՒՆ-ի վրա համավարակի ազդեցության և օտարերկրյա ներդրողների վարքագծի վերաբերյալ:



Գծապատկեր 3. Համալսարանի ազդեցությունն ՕՈՒՆ-ի վրա. փոխանցման մեխանիզմ (World Investment Report, 2020, էջ 3)

World Investmeny Report 2022-ի նախաբանում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեսը նշում է. «Անցյալ տարի օտարերկրյա ուղղակի ներդրումների համաշխարհային հոսքերը վերականգնվել են մինչև նախահամալսարանային մակարդակ, հասնելով 1.6 տրիլիոն դոլարի: Անդրասնանային գործարքները և հատկապես միջազգային նախագծային ֆինանսավորումը եղել են ուժեղ, ինչին նպաստել են ֆինանսավորման մեղմ պայմանները և ենթակառուցվածքի խթանումը: Սակայն կայուն չէ ներդրումների վերականգնումն արդյունաբերության նոր նախագծերում, հատկապես՝ զարգացող երկրներում»(World Investment Report, 2020, էջ iii): Հետևաբար՝ ակնհայտ է, որ առաջիկա տասնամյակում ՀՀ նման զարգացող երկրները չեն կարող ակնկալել ՕՈՒՆ-ի շոշափելի ներհոսք, ինչը պայմանավորված կլինի համաշխարհային շրջանների վերադասավորումների ազդեցությամբ ներդրումային հոսքերի լանդշաֆտի՝ մինչև 2030 թվականը սպասվող փոփոխություններով: Ակնհետ է, որ ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին այս աղբյուրը հայտնվել է մեծ անորոշությունների մեջ: Մասնավորապես, «դեպի առաքման շրջանների բարձրացած դիմադրողականություն, կրիտիկական առաքումների ինքնավարության ավելի բարձր աստիճաններ»-ը ենթադրում է օտարում, ուշադրեց և դուրսբերում: Օտարումը պարզ է. վաճառվում է ՕՈՒՆ-երի հիման վրա ստեղծված ՎԱԿ-ի դուստր ձեռնարկությունը, հավանական է, հյուրընկալող երկրի ռեզիդենտին: Դուրսբերումը ենթադրում է արտադրության տեղափոխում այլ երկիր: Սա, թեպետ քիչ հավանական, բայց հնարավորություն է ՀՀ նման երկրների համար: Մինչդեռ ուշադրեցը բոլորովին այլ գործընթաց է: Ռեշորինգը (անգլ.՝ reshoring) ապրանքների (ծառայությունների) արտադրությունը ծագման երկիր վերադարձնելու գործընթաց է (Merriam-Webster Dictionary, Investopedia), որի հիմնական


պատճառներից են զարգացող երկրներում աշխատուժի արժեքի և այլ ծախսերի բարձրացումը, բացի դրանից շոքոտների կիրառության շրջանակների ընդլանումը և աճը զարգացած երկրներում հնարավորություն են ընձեռել լուծելու այդ խնդիրները, բացի դրանից, ամենակարևոր պատճառներից է հետազոտությունների և մշակումների (R&D) զարգացած ենթակառուցվածքների և մեծ ներուժի առկայությունը տվյալ արտադրության ծագման երկրում: Ռեշորինգի գործընթացներ տեղի են ունեցել նաև նախկինում, հատկապես 2008 թ. ֆինանսա-տնտեսկան ճգնաժամին հաջորդած ժամանակաշրջանում: Օրինակ, տասնամյակներ շարունակ ամերիկյան մի շարք ընկերություններ զբաղվում էին օֆշորինգով՝ հաճախ իրենց արտադրական գործարանները տեղակայելով Չինաստանում, Մալազիայում, աշխատուժի և արտադրության ավելի ցածր ծախսերով այլ երկրներում: 2008 թվականից հետո այս ընկերությունները գտան ծախսերը կրճատելու այլընտրանքային ուղիներ՝ իրենց բիզնեսը վերադարձնելով ԱՄՆ:

Ներքին ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, բացի վերոնշյալ ռիսկերից և սահմանափակումներից, ենթակա են նաև այլ բնույթի ռիսկերի: Այսպես, ԱՄՆ Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի (NBER) գիտաշխատող Փիթեր Լինդերտը (Lindert, 1986, էջ 461) նկատել է. «Ջարգացող երկրների դիրքորոշումը երկակի է. նրանք անհանգստացած են ինչպես նրանում, որ օտարերկրացիները միջոցներ կներդնեն իրենց տնտեսության մեջ, այնպես էլ նրանում, որ ներդրումները կկրճատվեն: Մի կողմից, գոյություն ունեն շահագործման մտավախություններ, իսկ մյուս կողմից՝ մտավախություններ, որ կսահմանափակվի օտարերկրյա կապիտալի և տեխնոլոգիաների հասանելիությունը: Կառավարություններն արգելում և սահմանափակում են ուղղակի ներդրումները որոշ ոլորտներում, որտեղ արտասահմանյան ֆիրմաների ներկայությունը դիտվում է կամ անթույլատրելի հարստահարող կամ օտարերկրյա հավելյալ ազդեցության առաջացում»: Որպես այդպիսի ոլորտներից մեկը, Լինդերտը նշում է հանքարդյունաբերությունը: Նման դեպքերում որպես օտարերկրյա ներդրումների պայման, կառավարությունները հաճախ առաջադրում են այնպիսի պահանջներ, ինչպիսին են՝ կապիտալում տեղական ներդրողների մասնակցությունը, տեղական կադրերի պատրաստումը, տեղական կիսաֆաբրիկատների և հանգույցների օգտագործումը, հետազոտությունների և մշակումների իրականացումն ընդունող երկրում, արտահանման ընդլայնումը: Միաժամանակ, կարևորվում են նաև տնտեսական խթանները: Բացի դրանից, էական է երկրի տեխնոլոգիայի կյանող կարողությունը, որը ՀՀ-ի դեպքում ցածր է (ըստ 2008-2009 թթ. աստիճանակարգի, ՀՀ-ն 3.32 համաթվով, 137 երկրների շարքում, զբաղեցրել է 103-րդ հորիզոնականը. Լավագույն ցուցանիշը 7 է)⁴: Խոսքը վերաբերում է տեխնոլոգիայի տարածման կապուղիներին, փոխազդեցության մեխանիզմներին և R&D ռեսուրսներին (Lin, Tan and Chang, 2002, էջ 300-308):

Նկատենք, որ այդպիսի պայմաններ կարող է առաջադրել այն կողմը,

4 Համաթիվը մշակել է Գ. Վարդանյանը, որի հիման վրա կատարվել է 137 երկրների աստիճանակարգում: (Աղբյուր՝ Վարդանյան, 2009, էջ 29: Ամբողջական աստիճանակարգը՝ ատենախոսության հավելված 30-ում):

որը պատրաստ է շոշափելի ներդրումներ կատարել սեփական միջոցներից, որոնց աղբյուրը ներքին խնայողություններն են: Մինչդեռ դրանք ՀՀ-ում տևական ժամանակ պահպանվում են խիստ ցածր մակարդակում (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ՀՀ համախառն ներքին խնայողությունների մակարդակի դինամիկան. միջազգային համեմատություններ (աղբյուր՝ World Development Indicators)

Գծապատկեր 4-ից երևում է, որ ՀՀ համախառն ներքին խնայողությունների մակարդակը (ՀՆԱ-ի նկատմամբ %) կայունացած չէ և ցածր է՝ ՏՀԶԿ անդամ երկրների և աշխարհի միջին ցուցանիշի համեմատ: Միայն 1990-1991 թթ. գրացվել և նկատվել են բարձր, երկրների այդ երկու խմբերի միջին մակարդակներին մոտ ցուցանիշներ: Հետագա տարիներին այդ մակարդակը չի պահպանվել, իսկ 2021 թ. դրությամբ այն աշարհի միջինից ցածր է եղել 2.3 անգամ, իսկ ՏՀԶԿ-ի միջինից՝ մոտ երկու անգամ: Դա էլ պայմանավորել է ներքին խնայողություններով ներդրումների ֆինանսավորման սահմանափակ հնարավորությունները և արտաքին աղբյուրներից ֆինանսավորման անհրաժեշտությունը, որոնք, սակայն, նույնպես հայտնվել են անորոշությունների գոտում, չնայած դրանց համար անհրաժեշտ արտասահմանյան խնայողությունների բարձր և կայուն մակարդակին:

Եզրակացություն

Աշխարհաբաղադրական և աշխարհատնտեսական վերջին տարիների զարգացումները հանգեցրել են ՕՈՒՆ-ի համաշխարհային հոսքերի խիստ անկմանը, ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերի և սահմանափակումների մեծացմանը, ինչով պայմանավորված՝ առաջիկա ժամանակաշրջանում կուժգնանա երկրների մրցակցությունը դրանք ներգրավելու համար: Ընդ որում, հատկանշական է, որ համավարակի առաջացրած ճգնաժամի հաղթահարման համար առաջավոր երկրների միջոցառումներում ներառվել են նոր սահմանափակումներ, իսկ առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավոր-

րումները փոխում են ներդրումների լանդշաֆտը: Ենթադրաբար՝ դրանով է պայմանավորված եղել այն, որ 2021 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումների համաշխարհային հոսքերի վերականգնվելը մինչև նախահամավարակային մակարդակում, անդրսահմանային գործարքների և հատկապես միջազգային նախագծային ֆինանսավորման ուժեղացման արդյունք լինելուց բացի, որոշիչ են եղել նաև ֆինանսավորման մեղմ պայմանները և ենթակառուցվածքի խթանումը: Միաժամանակ, ներդրումների վերականգնումը չի եղել հատկապես զարգացող երկրների արդյունաբերության նոր նախագծերում:

Ակնհայտորեն, չնայած առաջացած նոր ռիսկերին և սահմանափակումներին, ՕՈՒՆ-ի ներգրավման առումով, ՀՀ մրցակցային դիրքի բարելավումը կարող է հիմնված լինել առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավորումների այս ժամանակաշրջանում դրանցում ՀՀ-ի ներգրավվելու ուղիների բացահայտումը, ինչը հնարավոր կարող է լինել երկրի՝ տեխնոլոգիայի կլանող կարողության բարձրացման, տնտեսության նոր հատվածների ձևավորման խթանման ճանապարհով:

Այսպիսով, ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերը և սահմանափակումները կարող են խնդիրներ առաջացնել ՀՀ հետագա տնտեսական աճի համար: Հետևաբար՝ դրանց մեղմման համար պահանջվում է ներքին խնայողությունների խթանման գործուն մեխանիզմների մշակում և գործադրում, ինչը կարող է հատուկ հետազոտության առարկա հանդիսանալ, ինչպես նաև ՕՈՒՆ-ի զուգորդմամբ ներքին ներդրումների ուղղորդում տեխնոլոգիական փոփոխություններին:

Օգտագործված գրականության ցանկ

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 31.07.1994: Հաստանի իրավական տեղեկատվական համակարգ, ՀՀԳԽՏ 1994/14 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>

Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, 2009–2021 հունվար–փետրվարին: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2022:

ՀՀ Վիճակագրական կոմիտե: Ազգային հաշիվներ <https://www.armstat.am/?nid=202>

Վարդանյան, Գ. (2009) *Գիտելիքահենք տնտեսության ձևավորման հիմնասխեմները ՀՀ-ում*//Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր:

Commission on Growth and Development (2008). *The Growth Report: Strategies for Sustained Growth and Inclusive Development*. Washington, DC: World Bank.

Domar, E. (1957). *Essays in the theory of economic growth*. New York: Oxford University Press.

Harrod, R. F. (Jun., 1960). *The Economic Journal*, Blackwell Publishing for the Royal Economic Society. Vol. 70, No. 278, էջ 277–293.

- Investopedia*. Reshoring. <https://www.investopedia.com/terms/r/reshoring.asp>
- Lin, C., Tan, B., Domar, E. Essays in the theory of economic growth. Chang, S. (2002). “The critical factors for technology absorptive capacity”, *Industrial Management & Data Systems*, Vol. 102 No. 6, pp. 300–308. <https://doi.org/10.1108/02635570210431993>
- Lindert, P. *International Economics*. Homewood, Illinois, IRWIN, 1986.
- Merriam–Webster Dictionary*. What is ‘reshoring’? <https://www.merriam-webster.com/words-at-play/reshoring>
- Solow, R. M. A Contribution to the Theory of Economic Growth, *Quarterly Journal of Economics*, Nr 70, No. 1 (Feb., 1956), pp. 65–94.
- World Development Indicators*. <https://data.worldbank.org>
- World Development Report: Finance for an Equitable Recovery. Washington, *World Bank*, 2022.
- World Investment Report*. 2000, 2005, 2007, 2010, 2020, 2021, 2022. New York, United Nations.

References

- «Otarerkrya nerdrumneri masin» *HH orenk'»* [The Law of the Republic of Armenia «On foreign Investment]: Yndunvel e 31.07.1994: Hastani iravakan teghekatvakan hamakarg, HHGKHT 1994/14,1994 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872> (In Arm.)
- Hayastani sots'ial–tntesakan vichaky 2009–2021 hunvar–p'trvarin* [Socio–Economic Situation of RA, January–February 2009–2021] (In Arm.)
- Hayastani vichakagrakan taregirk'* [Statistical Yearbook of Armenia], 2022. (In Arm.)
- HH Vichakagrakan komite, Azgayin hashivner* [RA Statistical Committee, National Accounts] <https://www.armstat.am/am/?nid=202> (In Arm.)
- Vardanyan, G. (2009) *Gitelik'ahenk' tntesut'yan dzevavorman himnakhndirney HH–um* [Problems of formation of knowledge-based economy in RA]//Tntesagitut'yan doktori gitakan astichani hayts'man atenakhosut'yan seghmagir (In Arm.)
- Commission on Growth and Development* (2008). The Growth Report: Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC: World Bank. (In Eng.)
- Domar, E. (1957) *Essays in the theory of economic growth*. New York: Oxford University Press. (In Eng.)
- Harrod, R. F. (Jun., 1960) *The Economic Journal*, Blackwell Publishing for the Royal Economic Society. Vol. 70, No. 278, pp. 277–293. (In Eng.)
- Investopedia*. Reshoring. <https://www.investopedia.com/terms/r/reshoring.asp> (In Eng.)
- Lin, C., Tan, B., Chang, S. (2002). “The critical factors for technology absorptive capacity”, *Industrial Management & Data Systems*, Vol. 102 No. 6, 300–308. doi.org/10.1108/02635570210431993 (In Eng.)

- Lindert, P. (1986). *International Economics*. Homewood, Illinois, IRWIN. (In Eng.)
Merriam–Webster Dictionary. What is ‘reshoring’? <https://www.merriam-webster.com/words-at-play/reshoring> (In Eng.)
- Solow, R. M. A Contribution to the Theory of Economic Growth, *Quarterly Journal of Economics*, Nr 70, No. 1 (Feb., 1956), pp. 65–94. (In Eng.)
World Development Indicators. <https://data.worldbank.org> (In Eng.)
- World Development Report: Finance for an Equitable Recovery. Washington, *World Bank*, 2022. (In Eng.)
- World Investment Report*. 2000, 2005, 2007, 2010, 2020, 2021, 2022. New York, United Nations. (In Eng.)

Գագիկ Վարդանյան

*Профессор кафедры Управления и ИТ Международного университета
Евразия, доктор экономических наук
Эл. адрес: gagik.v@yahoo.com*

Դավիթ Վարդանյան

*Руководитель команды обслуживания клиентов ООО «ФИЛИП МОРРИС
АРМЕНИЯ», Преподаватель кафедры Управления Европейского университета
Армении, кандидат экономических наук
Эл. адрес: vardanyandg@gmail.com*

ВНЕШНИЕ ИСТОЧНИКИ ФИНАНСИРОВАНИЯ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ. РИСКИ И ОГРАНИЧЕНИЯ

Экономический рост требует инвестиции, которые могут финансироваться как за счет внутренних, так и внешних источников, а их основой являются соответственно внутренние и иностранные сбережения. Развивающиеся страны с низким уровнем сбережений обращаются к внешним источникам финансирования внутренних инвестиций, которые зачастую связаны с определенными рисками и ограничениями. Геополитические и геоэкономические события последних лет, приведшие к росту неопределенностей, обусловили новые риски и ограничения внешних источников финансирования внутренних инвестиций, изучение которых важно для национальных экономик, в том числе экономики РА с точки зрения готовности и адекватного реагирования на вызовы.

В статье предпринята попытка раскрыть риски и ограничения, связанные с внешними источниками финансирования инвестиций в РА, такими как прямые иностранные инвестиции. Выявлено, что, хотя в 2021 году глобальные потоки прямых иностранных инвестиций были восстановлены до допандемического уровня, но в новых индустриальных проектах развивающихся стран (это касается и Армении) такого развития не произошло. Сделан вывод, что риски и ограничения, связанные с внешними источниками финансирования внутренних инвестиций могут создать проблемы для дальнейшего эко-

номического роста РА. Улучшение конкурентной позиции РА с точки зрения привлечения ПИИ в этот период радикальной перестройки глобальных цепочек поставок рассматривалось как способ их преодоления за счет увеличения технологической поглощающей способности страны и стимулирования формирования новых секторов экономики.

Ключевые слова: экономический рост, внешние источники финансирования инвестиций, прямые иностранные инвестиции (ПИИ), глобальные цепочки поставок, влияние пандемии на ПИИ

Gagik Vardanyan

*Full Professor of the Management and IT Department
at Eurasia International University, Doctor of Economics
Email: gagik.v@yahoo.com*

David Vardanyan

*Customer Care Team Lead at «PHILIP MORRIS ARMENIA» LLC, Ph.D.,
Lecturer of the Management Department
at European University of Armenia, Ph.D. in Economics
Email: vardanyandg@gmail.com*

EXTERNAL SOURCES OF INVESTMENT FINANCING IN THE REPUBLIC OF ARMENIA. RISKS AND LIMITATIONS

In the Condolence Message the US president supports Armenians, but at the same time avoids calling things by their names, without facing Turkish Government. The peculiarity of modality's expression is the latter expresses the primary feature of the diplomatic speech – ambiguity. Consequently, a question arises, when Trump says, '*we must remember*', will the president ultimately call these historical realities in their own names, whether he recognizes the genocide or not? As a result, we face the fact that this is a reality between 'yes' and 'no'. Here we see two manifestations of modality; the first is an objective one that captures the undeniable reality of genocide, and the second is the representation of subjectivity, which yields several interpretations and assumptions.

Another similar example is the answer of the Russian President Vladimir Putin to a journalist for an announcement of the meeting invitation by the President of Ukraine V.Zelensky at the International Economic Forum in St. Petersburg.

(XIV) (Журналистка) –Вы готовы с ним встретиться

(Владимир Путин)–*Послушайте меня. Я не знаю этого человека, надеюсь мы когда-нибудь познакомимся. Судя по всему, он хороший специалист в той области, в которой до сих пор работал, он хороший актер. (участники смеются). Я говорю серьезно (Путин тоже улыбается), а вы смеётся, вот значит, но одно дело кого-то играть от другое дело быть кем-то. Для того чтобы играть нужен талант, это точно и один из этих талантов — это талант перевоплощение. Ты через каждый десять минут можешь менять ампула, принц и нищий через каждые 10 минут и это надо быть убедительным, это действительно талант а для того чтобы заниматься государственными делами нужны другие качества, нужны опыт определенные знания, нужно уметь найти главные проблемы, увидеть их, найти инструменты решения этих проблем, уметь собрать дееспособных людей в одну команду, наладить с ними хорошие отношения, поверить в них, дать им возможность свободно мыслить и предлагать решения, выбирать эти решения, что очень важно*

объяснить миллионам людей, мотивы своего поведения при принятии этих решений и самое главное иметь мужество и характер брать на себя ответственность за последствия этих решений. Я не говорю, что у господина Зеленского нет этих качеств они вполне могут быть, ну опыт может них не хватать, но это дело как у нас в народе говорят наживное, это быстро приходит. Если другие качества у него которые перечислю вполне, может быть, но я этого не знаю. Он пока себя никак не проявил, а то, что мы видим, мы видим противоречивые высказывания в ходе предвыборной кампании одно, после выборов другое, поживем увидим, просмотрим. (Putin, 2019)

(Journalist) –Are you ready to meet him?

(V.Putin) –Listen to me please. I do not know this person; I hope someday we will get to know each other. Apparently, he is a good professional in the field where he had been working; he is a good actor. (Participants are laughing) I mean it seriously, and you are laughing (Putin also smiles), so, it is another thing to play as someone, and it is quite another thing to be someone. To play the role well you must have talent and one of those talents is the talent of reincarnation. You can change roles every ten minutes and transform from the prince to a pauper within ten minutes and you must be convincing in both roles, indeed it is a talent, but in order to engage in public affairs other qualities are obligatory, you need certain experience, some knowledge, you have to be able to find the main problems, see them, find the tool to solve those problems, you have to be able to bring together a team of capable people, cultivate a good relationship with them, believe in them, give them the opportunity to think freely and offer solutions, choose those solutions and most importantly, explain to millions of people, for those decisions that are made and most crucial, have the courage and character to take responsibility for the consequences of those decisions. I do not say that Mr. Zelensky does not have these qualities, they quite can be, but experience may not suffice for them, but as the people say it is a matter of time, it will pass quickly. He may have all the qualities I listed, but I don't know them. He has not shown up himself yet, and what we see, we see contradictory statements during the election campaign, and after elections, we will live and see, let's just see it. (Putin, 2019)

The Russian president builds his speech on assumptions. The first assumption is ‘*Apparently, he is a good professional in the field...*’. It seems as if the president by using the word ‘*apparently*’ draws a conclusion, but in the general sentence it has the meaning of assumption. ‘*He is a good professional*’, here the word ‘*good*’ is used to give a positive tone to the speech. To play a good role, he points out that one ‘*must*’ have certain qualities, but in order to govern a state some skills are ‘*obligatory*’. By applying to the modal verb ‘*must*’, and adjective ‘*obligatory*’ the president shows that in the first case it is simply the logical process of the

things, yet, in the latter case, the structure *'are obligatory'* demonstrates the importance and existence of those qualities that are needed or are obligatory to govern the country. The Russian president's words are ambiguous and ambiguity is more evident at the end of V.Putin's speech *'we will live and see, let's just see it'*. The first meaning is he might meet him, and the second he might not meet him. Generally, Putin's answer is directly comparative to the partially accepted definition of modality, which is interpreted as 'the speaker's attitude to the reality', yet by reading the whole speech of the president we see his opinion towards the questions of the journalist. In the president's speech, the possibility and the probability are obvious, and V.Putin in order not to rudely reject or refuse V. Zelenisky's invitation to meet each other, the answer is formulated in an alternative way.

In the section *«Я не говорю, что у господина Зелинского нет этих качеств они вполне могут быть, ну опыт может не хватать»/ 'I am not saying that Mr. Zelinsky does not have these qualities, they quite can be, but experience may not suffice for them'* the words *могут (mogut/can)* and *может (mozhet/might)* express probability.

The modality of the above-mentioned sentence is expressed through the structure *'will+ see'* (*we will leave and see, we will see it yet.*) which mitigates V.Putin's answer directed to the journalist's question about expectations of a possible meeting with the Ukrainian President V. Zelinsky. It allows us to think that there is no atmosphere of tension, but on the other hand the use of those structures shows a not yet made decision about possible meeting. In case we are dealing with epistemic modality. The president leaves the audience in ambiguity and assumptions. The peculiarity of modality, however, is that the president softens the essence of his speech, not being abruptly and rudely in it, and such manifestations are an important part of diplomacy and diplomatic discourse.

(XV) On behalf of my nation and state I would like to announce that our response to any negotiation under sanctions is negative. (Rouhani, 2019)

The above example is an excerpt from Iranian Ex-President Hassan Rouhani's speech at the 74th UN General Assembly. Let us start with the fact that diplomatic relations between the US and Iran are in non-constructive phase. The reason is Iran's goal to produce nuclear weapons, which the US opposes, and therefore imposes sanctions. In this speech, the head of the country expresses his wish, that there will not be any negotiations under sanctions. Here it is noteworthy that the President expresses a denial attitude. The emphasis is on the word *'negative'* which denotes denial meaning giving a possibility to H.Rouhani to steer clear of sharply and refuted diplomacy. The sentence could be just *'Iran will not negotiate with the US if the US continues to impose sanctions'*. But in that case the very meaning of the speech of Iran's president would not be effective and would be coloured by multifaceted meanings that's why the Iranian president's statement has been presented in a milder way, in which the meaning of the modality is the expression

of the will of the Iranian government. The message was expressed through the modal ‘would’. The president has avoided expressing his official position directly by applying these linguistic structures. Here we notice the idea of will and obligation. What is the peculiarity of the modality in this sentence of the president of Iran?

Thus, if the sentence had the following syntax: *‘Iran will not negotiate because the US is imposing sanctions’*, it would be harsh and rude in an international building such as the UN, as it would have a tone of intolerance which is not stemming from the country’s interests. If it had been expressed by means of the modal verb ‘must’, suchlike *‘If the United States wants to negotiate, then it must stop the sanctions’* then Iran’s official position would not have been expressed completely yet here we would have reverse image, namely, negotiations are only desirable for the United States and Iran is not interested in it, which would damage Iran’s image as non-collaborative and irresponsible country.

Peculiarities of the Meaning of Modality in the Contexts

The diplomatic field is a platform of caution and prudence, thus in many cases contexts are used that have their own and distinctive role. The speech is especially meaningful when it is seasoned with modality. To understand this, we will discuss a few examples below.

(XVI) *‘You may take this lightly, but these doors [to Europe] will open and these [ISIS] members will be sent to you. Do not try to threaten Turkey over developments in Cyprus’* (Erdogan, 2019)

To understand the context, we must first clarify the fact that Turkey has hosted three and a half million refugees and is engaged in arresting ISIS members. On the other hand, it wants to become a member of EU. Let us carefully consider the President’s words. The general idea is of blackmail, the president addresses EU leaders in the following way: *‘You may take this lightly’* by using probability in his speech. Then addressing perseverance, he points out that those doors will open, and those refugees will be sent to Europe. With the use of future tense Erdogan expresses veracity and reliability of the events. *‘These doors [to Europe] will open’, ‘these [ISIS] members will be sent to you’*. The usage of modality is essential here and it is applied in the right place namely in the beginning of the sentence. If we consider the sentence without *‘You may take this lightly’* then this would mean that there is no emphasis on the seriousness of Turkey’s position which the EU can ignore, therefore the president highlighted it. The true meaning of the text is that Turkey will send all refugees (currently Europe is avoiding refugees) and ISIS members if the EU continues to raise the issue of Cyprus (some part of the Cyprus peninsula is occupied by Turkey). This context of the speech could not be said directly for several reasons that are probably not in Turkey’s interest and such kind of drastically use of the meaning would create an atmosphere that Turkey is an aggressor country.

The next example is an extract from the letter North Korea's U.N. ambassador Kim Song to the fourteen members of the UN Council, within which the North Korean ambassador expresses his attitude and an official position of the country to the US criticism of human rights abuses in North Korea and states further the following:

(XVII) If the Security Council would push through the meeting on 'human rights issue' of the DPRK the situation on the Korean Peninsula would take a turn for the worse again. The United States and those countries on board shall bear full responsibility' (Song, 2019)

The context of the first sentence is not to organize such a meeting, where consequences are indicated. Second, it hints that all countries agreeing with that and having their participation will bear full responsibility. Based on diplomatic skills, the very essence of the message is not explicitly stated, otherwise it would be an open war with the United States. However, the basis of the sentence is the menace according to which North Korea will take steps for which, not North Korea, but the US and other cooperating countries are responsible for undesirable consequences. We note that the subjunctive tense was used in the first part of the text *'If the Security Council would push'*, with the use of comparative adjective *'the worse'*, the degree of worsening negativity is indicated. At the end of the text *'shall bear full responsibility'*, where *'shall'* has several subtexts: the first – obligation, the second – commitment, and the third – inevitability. The adjective *'full'* emphasized in the sentence makes it clear that the United States and its partner countries will not be partially responsible for the events but will completely shoulder the responsibility.

Conclusion.

Language is an important instrument in human communication and is the only means that allows people to exchange ideas and come to a common consensus. As we can see in the examples mentioned in the paper, we can clearly state that especially in diplomatic and political processes, language should be used with greater care and caution. From this point of view, the process of modality is significant, as it can give different shades to the sentence and speech. In this article, by identifying, discussing, and analysing several examples voiced by some politicians in the UN and other diplomatic platforms, we can come to the following conclusion:

The main purpose of diplomatic discourse is to find a positive way. Negotiating is to find a peaceful solution, and the role of modality is more emphasized here, and the modality should hold a positive message.

The diplomatic speech must be highly thought-out and organized, and modality here should contribute to the constructiveness of the speech.

Modality of negation is not that much accepted in the diplomatic sphere, so the words must be structured in such a way that the sentence expresses a negative

modality, meaning, at the same time having no negative grammatical component. Negation should not be expressed in a straightforward and rude sense, which will allow the diplomat to adopt a policy of flexibility in the choices. For instance, we can express the sentence of Iran's president Hassan Rouhani speech in this way *'The negotiations between Iran and the US under sanctions are lifeless'* where the word lifeless means that the negotiations have no continuation or future, or it is impossible to negotiate in these conditions.

Modal verbs, such as 'may', 'should', 'must', 'can' have a wide application in this area, which emphasize or weaken the meaning of the sentence, and which may also be expressed in another sense. Modality can be expressed without modal verbs. It can be expressed by certain grammatical structures, nouns, adjectives, adverbs, etc; for example, if we use the adjective "good" then it gets a positive meaning and if we use "ineffective" it gets a negative colouring.

In diplomatic discourse, the concepts of the category of modality, likewise 'probability', 'possibility', and 'compulsion' are often used which helps us to determine the purpose pursued by diplomacy.

Bibliography

- Abbas, M. P. (2019). Retrieved from <https://www.aljazeera.com/news/2019/09/hold-general-assembly-2019-latest-updates-190916224113531.htm>
- Ascanio, A. (2001). *Análisis del contenido del discurso político*. Equinoccio.
- Britannica, E. o. (2020). Diplomacy. Retrieved from <https://www.britannica.com/topic/diplomacy>
- Christer Jönsson, M. H. (2005). *Essence of Diplomacy*. Springer.
- D'Acquisto, G. (2017). *A Linguistic Analysis of Diplomatic Discourse: UN Resolutions on the Question of Palestine*. Cambridge Scholars Publishing.
- D'Acquisto, G. (2017). *A linguistic Analysis of Diplomatic Discourse: UN Resolutions on the Question of Palestine*. Cambridge Shcolars Publishing.
- DiCaprio, L. (2019). Retrieved from https://www.youtube.com/watch?v=vTyLSr_VCcg
- Diplomacy. (2019). *Diplomacy*. IntroBooks , Can Akdeniz,.
- Diplomacy. T. O. (2013). *The Oxford Handbook of Modern Diplomacy*. OUP Oxford.
- Erdogan, R. (2019). *CBC*. Retrieved from <https://www.cbc.ca/news/world/turkey-erdogan-cyprus-isis-1.5356221>
- Imran Khan, P. M. (2019). Retrieved from <https://www.aljazeera.com/news/2019/09/hold-general-assembly-2019-latest-updates-190916224113531.html>
- Isabela Fairclough, N. F. (2013). *Political Discourse Analysis: A Method for Advanced Students*. Routledge.
- Johnson, B. (2019). Retrieved from <https://www.youtube.com/watch?v=zf4YEyh7erE>
- Johnson, B. (2019). Retrieved from <https://www.gov.uk/government/speeches/pm-statement-at-nato-meeting-4-december-2019>
- Kishan S. Rana. (2004). *'The 21st Century Ambassador: Plenipotentiary to Chief Executive'*. Diplo Foundation.
- Langholtz, H. (2004). *' The Psychology of Diplomacy'*. Greenwood Publishing Group,.

- Naledia Pandor, S. A. (2019). Retrieved from <https://www.aljazeera.com/news/2019/09/hold-general-assembly-2019-latest-updates-190916224113531.html>
- Nick, S. (2001). Use of language in diplomacy. Retrieved in 2020, from <https://www.diplomacy.edu/resources/general/use-language-diplomacy>
- Panfilov, V. (1977). *Категория модальности и ее роль в конструировании структуры предложения и суждения*. В. З. Панфилов. – М./ Panfilov, V 'Category of modality and its role in constructing the structure of sentences and judgments
- Pashinyan, N. (2019). *Prime Minister of Armenia*. Retrieved from <https://www.primeminister.am/hy/congratulatory/item/2019/12/05/Nikol-Pashinyan-Congratulations/>
- Putin.V (2019). Retrieved from <https://www.youtube.com/watch?v=lxtagauQxw9M>
- Ray T. Donahue, M. H. (1997). *Diplomatic Discourse: International Conflict at the United Nations— Addresses and Analysis*.. Greenwood Publishing Group.
- Resolution:2733, E. (2019). Retrieved from http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2019-0005_EN.html?redirect
- Sánchez, P. (2019). Retrieved from <https://www.youtube.com/watch?v=ftIPJwOduFk>
- Slavik, H. (2004). *Intercultural Communication and Diplomacy*. Diplo Foundation.
- Song, K. (2019). Euronews Retrieved from <https://www.euronews.com/2019/12/04/north-korea-warns-un-security-council-not-to-discuss-rights>
- S/RES/2485, U. r. (2019). Retrieved from [https://undocs.org/S/RES/2485\(2019\)](https://undocs.org/S/RES/2485(2019))
- S/RES/2489, U. r. (2019). Retrieved from [https://undocs.org/S/RES/2489\(2019\)](https://undocs.org/S/RES/2489(2019))
- Stanzel, V. (2018). *New Realities in Foreign Affairs: Diplomacy in the 21st Century*. Stiftung Wissenschaft und Politik,. Retrieved in 2020, from https://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/research_papers/2018RP11_sze.pdf
- The Oxford Handbook of Modern Diplomacy. (2013). *'The Oxford Handbook of Modern Diplomacy'*.. OUP Oxford.
- Trump, D. (2019). Retrieved from <https://www.youtube.com/watch?v=eICiLRyKTFg>
- Trump, D. (2019). Retrieved from <https://www.whitehouse.gov/briefings-statements/statement-president-donald-j-trump-armenian-remembrance-day-2017/>
- Wright, S. (2000). *Community and Communication: The Role of Language in Nation State Building and European Integration*. Multilingual Matters.

Անուշ Մարտիրոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի օգտար լեզուների և գրականության
ամբիոնի դասախոս, նայն ամբիոնի հայցորդ
lj.huuugle`anush.martirosyan92@gmail.com

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Քաղաքական և դիվանագիտական իրադարձություններով պայմանավորված դիվանագիտական խոսույթը դարձել է մի երևույթ, որտեղ լեզվի օգտագործումը մեծ նշանակություն և հետաքրքրություն է ներկայացնում, և միշտ գրավել է վերլուծաբանների, լրատվամիջոցների, հասարակության և

այլոց ուշադրությունը: Հասկանալով և ընդգծելով դիվանագիտության մեջ լեզվի կարևորությունը, այս աշխատության շրջանակներում մենք փորձել ենք ցույց տալ դիվանագիտական խոսույթի մի քանի կարևոր առանձնահատկություններ՝ բացահայտելու դիվանագիտական խոսքի ենթատեքստն ու երանգները: Հիմք ընդունելով և կիրառելով դիվանագիտության և եղանակավորման վերաբերյալ արդի ուսումնասիրությունները և տարբեր երկրների ղեկավարների ուղերձները, մենք փորձել ենք բացահայտել դիվանագիտության մեջ օգտագործվող լեզվի արդյունավետ կողմերը: Այն կարող է օգնել ավելի արդյունավետ դարձնել լեզուն՝ կիրառելով եղանակավորումը, որն ավելի է շեշտադրում և արժևորում խոսքը: Մյուս կողմից, այն կարող է թույլ տալ վերլուծել դիվանագիտական խոսույթի ենթատեքստը՝ խոսույթի թաքնված ուղերձները բացահայտելու համար:

Հիմնաբառեր. դիվանագիտություն և լեզու, խոսույթ, եղանակավորում, երկակիություն, ենթատեքստ, պակասավոր բայեր, նախադասություն:

Ануш Мартиросян

*Преподаватель и соискатель кафедры иностранных языков и литературы
Международного университета Евразия
Эл. адрес: anush.martirosyan92@gmail.com*

ОСОБЕННОСТИ МОДАЛЬНОСТИ В ДИПЛОМАТИЧЕСКОЙ РЕЧИ

В связи с политико-дипломатическими событиями дипломатический дискурс стал явлением, где использование языка представляет большое значение и интерес, и всегда привлекал внимание аналитиков, СМИ, общественности и др. Осознавая и подчеркивая важность языка в дипломатии, в рамках этой работы мы постарались показать некоторые важные особенности дипломатического дискурса, чтобы раскрыть контекст и нюансы дипломатической речи. На основе и применении современных исследований по дипломатии и модальности, и посланий лидеров разных стран мы попытались раскрыть эффективные аспекты языка, используемого в дипломатии. Это может помочь сделать язык более эффективным, используя модальность, которая больше подчеркивает и оценивает слово. С другой стороны, это может позволить проанализировать контекст дипломатической речи, чтобы раскрыть скрытые послания речи.

Ключевые слова: дипломатия и язык, дискурс, модальность, двусмысленность, контекст, модальные глаголы, предложение.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2022թ. փետրվարի 28-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2022թ. ապրիլի 4-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2022թ. ապրիլի 20-ին:

Լուիզա Մարաբյան
*Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս,
Կիրառական լեզվաբանության ամբիոնի հայցորդ,
Էլ. հասցե՝ marabyanliza@gmail.com*

Սոնա Հակոբյան
*Հայաստանի եվրոպական համալսարան
Կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ hakobyan04.07@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2022.1-145

ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Վերջին ժամանակներում քաղաքական խոսույթի քննական ուսումնասիրությունների շրջանակներում մեծ արդիականություն են վայելում քաղաքական բանավեճերի լեզվական ուսումնասիրությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքական բանավեճերն առհասարակ դիտարկվում են որպես խոսքային իրադարձություններ, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու մասնակիցներին ըստ խոսելաձևի և պահելաձևի: Սույն հոդվածի նպատակն է քննարկել մասնակիցների սեռի ազդեցությունը անձի վերահսկողության վրա, և գնահատել կանանց ու տղամարդկանց կողմից կատարված խոսքային ընդհատումների պատճառները:

Հիմնաբառեր. ընդհատում, կին, տղամարդ, քաղաքական բանավեճ, թեկնածու, գենդերային ագրեսիա, ռազմավարություն:

Ներածություն

Քաղաքական բանավեճերը բնութագրվում են որպես մրցույթ, որտեղ կան թե՛ հաղթողներ, թե՛ պարտվողներ: Չնայած բանավեճերն ունեն իրենց ընթացակարգերը, որոնք հավասարապես վերաբերում են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց, այնուամենայնիվ, երկու սեռերի միջև առկա են անհավասարություններ: Իրականում ընդհատումը համարվում է լեզվական ռազմավարություն, որն օգնում է հասնել գերիշխանության. ընդհատել ինչ-որ մեկին, նշանակում է զրկել կամ ամենաքիչը՝ փորձել զրկել նրան խոսելու իրավունքից: Առհասարակ, ընդհատումները ենթադրում են գերակայություն, ագրեսիա, դեմքի սպառնալիք և անհամաձայնություն: Տղամարդու և կնոջ մասնակցությամբ հեռուստաբանավեճերում հիմնականում գերիշխողը տղամարդիկ են, հատկապես, եթե նրանք բավարար գիտելիքներ ունեն քննարկվող թեմայի վերաբերյալ: Ընդհատելով, նրանք ի ցույց են դնում իրենց գերակա լինելը բանավեճի շրջանակում և վերահսկում թեմայի զարգացումը: Ոլորտի հետազոտողներ Ջիմմերմանի և Ուեսթի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քառասունութ ընդհատումներից միայն երկուսն են արվել կանանց կողմից և չի օգտագործվել ոչ մի զուգահեռ խոսք (overlap), մինչդեռ տղամարդիկ կիրառել են ինը զուգահեռ խոսք (overlap) (Zimmerman, D. H., West, C., 1975, էջ 116):

Մենք մեր հերթին փորձել ենք վերլուծել 2019 թվականի ԱՄՆ նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների երկու բանավեճերը: Նախագահի դեմոկրատական թեկնածուների բանավեճերը տեղի են ունեցել հունիսի 26-ին և 27-ին, որին մասնակցող քսան թեկնածուներից վեցը կանայք էին:

Մեթոդ

Հոդվածում կիրառել ենք նկարագրական որակական մեթոդը՝ փորձելով բացահայտել թեկնածուների բանավեճում գենդերային ագրեսիայի դրսևորումը ընդհատման միջոցով:

Արդյունքներ

Խոսողները հաղորդակցական նպատակների հասնում են տարատեսակ միջոցներով՝ թե՛ խոսքային, և թե՛ ոչ խոսքային: Նմանատիպ հռետորական ռազմավարություններով խոսողները փորձում են իրագործել իրենց նպատակները, և ինչպես իրավացիորեն նշում է Վան Դեյքը նմանատիպ ընտրությունները «սոցիալական ինքնության իրավիճակային կիրառություններ են», որոնք փոխակերպում են խոսողի ինքնությունը տվյալ իրավիճակում (Dijk, 2018): Այս ռազմավարություններից մեկն էլ ընդհատումն է, որը քաղաքական խոսույթում ունի կիրառության լայն համատեքստ: Մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ ընդհատումը, որպես խոսքային ռազմավարություն, ունի տարբեր տեսակներ: Ոլորտի հետազոտող Լին նշում է, որ գոյություն ունեն այսպես կոչված հաջողված և չհաջողված ընդհատումներ: Սրանցից առաջինը վերաբերում է այն ընդհատումներին, երբ առաջին

խոսակցի ասույթը ընդհատվում է երկրորդ խոսակցի ասույթով, և առաջին խոսակիցը դադարեցնում է խոսքը: Չհաջողված ընդհատման դեպքում երկրորդ խոսակիցն ընդհատում է առաջին խոսակցին, և երկու խոսակիցները հավասարապես շարունակում են ասույթը մինչև բանավեճի ավարտը (Li, 2001): Այլ հետազոտողներ՝ Քրեյգը և Փիթսը, առանձնացնում են ընդհատման հինգ տեսակ՝ **պարզ ընդհատում** (simple interruptions), **զուգահեռ խոսք** (overlap), **միջամտություն** (butting in), **լուռ ընդհատում** (silent interruptions) և **խանգարող խոսք** (talkovers) (Craig, D., & Pitts, M, 1990): Նրանք պնդում են, որ տղամարդիկ ավելի հաճախ են ընդհատում, քան կանայք, ինչպես նաև նշում են, որ կանանց ավելի քիչ հերթ և ժամանակ է հատկացվում խոսելու համար (Craig, D., & Pitts, M, 1990, p. 135): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, երբ կանայք տղամարդկանց ընդհատում են, նրանց տղամարդ գործընկերներն իրենց համարում են եռանդուն և գիտակ, միննույն ժամանակ՝ ցածր մտավոր կարգավիճակ ունեցող, մինչդեռ երբ տղամարդն է կիրառում ընդհատման ցանկացած տեսակ, ապա նրա գործընկերները նրան համարում են բարձր մտավոր կարգավիճակի տեր անձնավորություն (Mulac, A., & Van Dyke, H, 1992): Նոֆսինգերը նշում է, որ տարբերությունների կարևորությունը դիտարկվում է համատեքստի, առաջադրանքի, կարգավիճակի, ընդհատման տեսակների և խմբի գենդերային կազմի մեջ: Մասնավորապես նշվում է, որ ընդհատումը պետք է ունենա առնվազն երեք հատկանիշ.

- Կողմերից յուրաքանչյուրը խոսակցի ելույթը համարում է անարդյունավետ
- Ընդհատողը նախօրոք ինքնաընտրվում է
- Կողմերից յուրաքանչյուրը հավատում է, որ իր խոսելու հերթը խախտել են (Nofsinger, 1991):

Մեկ այլ հետազոտող՝ Դինդիան, ենթադրում է, որ ընդհատումը կարող է կախված լինել այնպիսի գործոններից, ինչպիսիք են **ընդհատողի կարգավիճակը և դերը, խոսքային գործունեությունը, նյութի զարգացման բովանդակությունը** և այլ (Dindia, 1978): Մյուրեյն ավելացնում է, որ այնքան կարևոր չէ ելույթն ավարտելը, որքան կարևոր է խոսողի սոցիալական կարգավիճակը, խոսքի տևողությունը, լուսաբանված կետերը և խոսողի հատուկ իրավունքները, որոնք հիմնված են նրա դիրքի, հեղինակության և տվյալ թեմայի շրջանակներում գիտելիքների վրա (Murray, 1985):

Ընդհանրացնելով վերոբերյալը՝ կարող ենք փաստել, որ ընդհատումը՝ որպես հաղորդակցական ռազմավարություն, առկայացվում է տարատեսակ միջոցներով և իրականացնում է հստակ գործառույթ հենց գենդերային հաղորդակցության համատեքստում:

Քննարկում

Ինչպես նշեցինք, սույն հոդվածը քննում է 2019 թվականի ԱՄՆ նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների երկու բանավեճերը:

Բանավեճին մասնակցում էին 20 թեկնածու, որոնցից 6-ը կին էին: Թեկնածուները երկու երեկոյի ընթացքում միմյանց ընդհատել են 71 անգամ:

Առաջին բանավեճի ընթացքում հիմնականում տղամարդիկ էին իրար ընդհատում, միջամտում և զուգահեռ խոսում, մինչդեռ կանայք, ընդհանուր առմամբ, սպասում էին, որ իրենց թույլ տան խոսել: Ամենաշատ ընդհատողը թեկնածու Բիլ դե Բլասիոն էր, որը մեղմեց այդ ագրեսիան իր հոր մասին անձնական պատմություններով /տես գծապատկեր 1/: Նա նույնիսկ կոպիտ միջամտեց Բետո Օ՛Նուրկին, ասելով՝ “Hey, wait, wait.” (Հեյ, սպասեք, սպասեք): Ավելի ուշ, երբ սենատոր Քոբի Բուքերին հարց ուղղվեց, Ջուլիան Կաստրոն միջամտեց. “If I might briefly ...” (Եթե ես կարողանայի կարճ...):

Լատինական միակ թեկնածու Ուլիան Կաստրոն ստիպված էր պայքարել խոսելու ժամանակի համար: Էլիզաբեթ Ուորենը գերիշխում էր բանավեճի սկզբնական հատվածում՝ ցուցաբերելով վստահություն, գիտելիքներ և պատրաստականություն: Նա հանգիստ էր և առաջ էր քաշում խելամիտ քաղաքական գաղափարներ: Ի պատասխան Վաշինգտոնի նահանգապետ Ջեյ Ինսլիի սնապարծությանը՝ սենատոր Էմի Քլոբուչարը հեգնողաբար նկատեց, որ այստեղ երեք կանայք կային, որոնք պայքարել են կնոջ ընտրության իրավունքի համար. “I just want to say, there’s three women up here that have fought pretty hard for a woman’s right to choose.”

Հարկ է նշել, որ բանավեճին մասնակցող կանայք պարզապես նախագահի թեկնածուներ չեն. նրանք փորձառու քաղաքագետներ են, որոնք հաճախ են պայքարել իրենց տղամարդ գործընկերների վրա ազդելու և իրենց խոսքը լսելի դարձնելու համար: Ուորենը, Մինեսոտա նահանգի սենատոր Էմի Քլոբուչարը և Հավայան կղզիների ներկայացուցիչ Թուլսի Գեբարդը ասելիքի պակաս չունենին: Բանավեճի ամենահիշարժան պահը Գեբարդի խոսքակոխիվն էր Օհայոյի ներկայացուցիչ Թիմ Ռայանի հետ արտաքին քաղաքականության շուրջ:

Հատված բանավեճից

Ryan: “The reality is, if the United States isn’t engaged, the Taliban will grow and they will have bigger, bolder terrorist acts.”

Gabbard: “The Taliban was there long before we came in. They’ll be there long before we leave.”

Ryan: “And they were — yeah, exactly. Well, we were.”

Gabbard: “We cannot keep U.S. troops deployed to Afghanistan thinking that we’re going to somehow squash this Taliban that’s been there, that every other country that’s tried has failed”.

Ryan: “I didn’t say — I didn’t say squash them. I didn’t say squash them. When we weren’t in there, they started flying planes into our buildings. So I’m just saying right now we have an obligation...”


Gabbard: “The Taliban didn’t attack us on 9/11. Al-Qaeda did.”

Ryan: Well, I — I understand...

Գեբարդն իրեն բավականին ինքնավստահ էր դրսևորում՝ կիրառելով


պարզ ընդհատում, զուգահեռ խոսք, միջամտություն և լուռ ընդհատում՝ որպես անհամաձայնություն թափահարելով գլուխը: Նա շատ լավ տիրապետում էր քննարկվող հարցին և բնականաբար հակաճառում և ուղղում էր Թին Ռայանին:

Գծապատկեր 1
Կանանց և տղամարդկանց ընդհատումներն ըստ տեսակների



Երկրորդ օրվա բանավեճն ավելի թեժ էր: Թեկնածուները բանավեճի առաջին տասը րոպեի ընթացքում բղավում էին միմյանց վրա: Ի տարբերություն նախորդ օրվա բանավեճի՝ այստեղ ընդհատումների մեծ քանակ գրանցվեց Նյու Յորքի սենատոր Քրիստեն Գիլբրանդի և հեղինակ Մարիան Ուիլյամսոնի կողմից /տես գծապատկեր 2/:

Գծապատկեր 2
Կանանց և տղամարդկանց ընդհատումները ըստ տեսակների



Քալիֆորնիայի սենատոր Քամալա Հարիսը բանավեճի ամենաազդեցիկ կերպարներից էր: Նա իրեն դրսևորեց որպես առաջադեմ, գերիշխող և իրազեկ քաղաքական գործիչ: Եվ վերջապես, Քամալա Հարիսը ամենադժվար և ամենաարդյունավետ հարվածը հասցրեց դեմոկրատների առաջատար Ջո Բայդենին: Նա ակնհայտորեն քննադատում էր Բայդենին՝ դպրոցական ավտոբուսներին դեմ քվեարկելու համար. “And it was not only that, but you also worked with them to oppose busing. And there was a little girl in California who was part of the second class to integrate her public schools and she was bused to school every day. And that little girl was me.” Բայդենի պատասխանները պաշտպանողական էին և անհետևողական: “It’s a mischaracterization of my position across the board. I did not praise racists. That is not true.”I was a public defender (Ես հանրային պաշտպան էի) I didn’t become a prosecutor. I came out and I left a good law firm to become a public defender. I did not oppose bussing in America (Ես դեմ չէի ավտոբուսներին Ամերիկայում). What I opposed is bussing ordered by the Department of Education. That’s what I opposed. I did not oppose...”

Սենատորներ Մայքլ Բենեթը և Քիրստեն Գիլիքրանդը նույնպես անցան հարձակման՝ կասկածի տակ դնելով Բայդենի՝ Սենատում ցուցաբերած բանակցային հնարությունները: Հարիսը կարողանում էր վերահսկել և գերակայել մասնակիցներին: Հատկապես բուռն քննարկման ժամանակ, երբ մի քանի թեկնածուներ ընդհատում էին միմյանց, Հարիսը ձայնը բարձրացնելով՝ ասում է.

“Hey, guys. America does not want a food fight,” Harris said. “They want to hear how we’re going to put food on their table.” / Լսե՛ք, Ամերիկյան չի ցանկանում մարտնչել սննդի համար: Ամերիկացին ուզում է լսել ինչպես ենք մենք պատրաստվում ուտելիքը դնել իրենց սեղաններն/:

Ըստ ամենայնի, երկրորդ բանավեճում, կանայք կիրառում են մեծ թվով պարզ ընդհատումներ, զուգահեռ խոսք և միջամտություն, քան տղամարդիկ:

Եզրակացություն

Այսպիսով, հաղորդակցական ռազմավարությունների համատեքստում իրականացված ուսումնասիրությունները մեծամասամբ ցույց են տալիս, որ բանավեճերում հիմնականում տղամարդիկ են ընդհատում և գերակայում, այնուամենայնիվ, ըստ մեր վերլուծության արդյունքների՝ հատկապես վերջին տարիներին (2019 թ.) բանավեճերի ժամանակ ամերիկյան քաղաքական խոսույթում կանայք բավականին ինքնավստահ են, նպատակապես և կարողանում են վերահսկել և առաջավորել քննարկվող թեմաները: Հաշվի առնելով գենդերային անհավասարությունը, իրենց խոսքը լսելի դարձնելու և նպատակին հասնելու համար՝ կանայք կիրառում են ընդհատման բոլոր տեսակները՝ զուգահեռ խոսք, միջամտություն, լուռ ընդհատում, խանգարող խոսք, պարզ ընդհատում:

Bibliography

- Craig, D., & Pitts, M. (1990). The dynamics of dominance in tutorial discussions. *Linguistics* 28/1, 125–138.
- Dijk, T. A. (2018). Socio-cognitive discourse studies. *The Routledge Handbook of Critical Discourse Studies* (էջեր 26–43). ի սնւոն Routledge.
- Dindia, K. (1978). The Effects of Sex of Subject and Sex of Partner on Interruptions. *Human Communication Research*, 345–371.
- Li, H. (2001). Cooperative and intursive interruptions in inter- and intracultural. *Journal of Language and Social Psychology* 20(3), 259–284.
- Mulac, A., & Van Dyke, H. (1992). Gender, personality characteristics, and reactions to interruption use in conversations: So who says interruptions are bad? *Annual Meeting of the Speech Communication Association*. Chicago.
- Murray, S. O. (1985). Toward a model of members' methods for recognizing interruptions. *Language in Society*, Volume 14, Issue 1, 31–40.
- News: *The full transcript of Night One of the first Democratic primary debate, Wednesday, June 26, 2019* <https://www.nbcnews.com/politics/2020-election/full-transcript-first-democratic-primary-debate-2019-n1022816> (22.02.2022)
- News: *The full transcript of Night Two of the first Democratic primary debate, Thursday, June 27, 2019* <https://www.nbcnews.com/politics/2020-election/full-transcript-2019-democratic-debate-night-two-sortable-topic-n1023601> (10.01.2022)
- Nofsinger, R. E. (1991). *Everyday conversation*. London: Sage: Newbury Park, CA.
- YouTube: *Democratic Presidential Debate – June 26 (Full) | NBC News* <https://www.youtube.com/watch?v=vJ6MrD00kgY> (10.01.2022)
- YouTube: *Democratic Presidential Debate – June 27 (Full) | NBC News* <https://www.youtube.com/watch?v=cX7hni-zGD8> (10.01.2022)
- Zimmerman, D. H., West, C. (1975). *Sex roles, interruptions, and silences in conversation*. New Jersey: Rowley, MA: Newbury House.

Луиза Марабян

*Преподаватель Европейского университета Армении,
соискатель кафедры прикладной лингвистики
Эл. адрес: marabyanliza@gmail.com*

Сона Акопян

*Заведующая кафедрой прикладной лингвистики
Европейского университета Армении,
кандидат филологических наук
Эл. адрес: hakobyan04.07@gmail.com*

ПРЕРЫВАНИЕ КАК СРЕДСТВО ВЫРАЖЕНИЯ ГЕНДЕРНОЙ АГРЕССИИ И КОММУНИКАЦИОННОЙ СТРАТЕГИИ (ССЫЛАЯСЬ НА ДЕБАТЫ КАНДИДАТОВ В ПРЕЗИДЕНТЫ США)

В последнее время в рамках экзаменационных исследований политической речи большую актуальность приобретают языковые исследования политических дискуссий. Исследования показывают, что политические дебаты рассматриваются как речевые события, которые дают возможность оценивать участников по стилю речи и поведению. В данной статье рассматривается влияние на контроль поведения по половому признаку и излагаются основные причины прерывания речи у мужчин и женщин. В политических дебатах каждого пола, помимо подчеркивания причин прерываний, также изучаются типы коммуникативных прерываний в контексте разных полов. В статье обсуждаются следующие типы прерываний: параллельная речь, помехи, тихое прерывание, прерывистая речь и простое прерывание. В целом, исследование основано на дебатах кандидатов в президенты США, а агрессия по половому признаку раскрывается через прерывания.

Ключевые слова: прерывание, женщина, мужчина, политические дебаты, кандидат, гендерная агрессия, стратегия.

Luiza Marabyan

*Lecturer and Ph.D. student at Chair of Applied Linguistics,
European University of Armenia
Email: marabyanliza@gmail.com*

Sona Hakobyan

*Head of the Chair at Applied Linguistics,
European University of Armenia,
Ph.D. in Philology
Email: hakobyan04.07@gmail.com*

INTERRUPTION AS A MEANS OF EXPRESSING GENDER AGGRESSION AND AS A COMMUNICATION STRATEGY (WITH SPECIAL REFERENCE TO US PRESIDENTIAL CANDIDATE DEBATES)

In recent years, the linguistic study of political debates is considered a novel trend within the framework of political discourse and critical discourse analysis. Studies prove that political debates are speech events, allowing to evaluate participants according to their speech style and behavior. The given article touches upon the gender influence on behavior control and outlines the core reasons of speech interruptions for men and women. The study basically outlines the strategies of communicative interruptions in line with gender speech differences trying to reveal the balance of interruptions among men and women. Besides emphasizing the reasons of each gender interruptions in political debates, the types of communicative interruptions are being studied in the context of different genders. In the article the following types of interruption is being discussed: parallel speech, interference, silent interruption, disruptive speech, simple interruption. Overall, the study is based on the US presidential candidate debates and gender aggression is then being disclosed through interruptions.

Key words: interruption, woman, man, political debate, candidate, gender aggression, strategy.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2022թ. մայիսի 20-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2022թ. հունիսի 8-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2022թ. հունիսի 9-ին:

Արթուր Միրզոյան
*Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության
ֆակուլտետի մագիստրանտ*
Էլ. հասցե՝ mirzoianarthur@gmail.com

DOI: 10.53614/18294952-2022.1-154

ՔԱՂԱՔԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԽՈՒՄՀԱՐ» ՎԻՊԱԿՈՒՄ

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության առաջին իսկ վերլուծություններից ավանդաբար կարևորվում են գյուղի և գյուղական կյանքի պատկերումները, մինչդեռ քաղաքը, որը կենտրոնական նշանակություն ունի մաթևոսյանական արձակն իր ամբողջությամբ հասկանալու համար, կոնցեպտուալ մակարդակի վրա քննության չի առնվել: Հոդվածի նպատակն է քննել քաղաքի պատկերումը «Խումհար» վիպակում՝ դիտարկելով այն արդիականացման գործընթացների հետ հարաբերության մեջ: Վիպակը քննվում է Մաթևոսյանի ստեղծագործության և իր ստեղծման ժամանակի լայն համատեքստերում. փորձ է արվում համակողմանիորեն անդրադառնալ արդիականության ուսումնասիրության տեսանկյունից այնպիսի կենտրոնական հասկացությունների արտացոլմանը, ինչպիսիք են կայսերական գերիշխանությունը, օտարի փորձառությունը և մարմնի մշակույթը: Առաջարկվում են վիպակի նոր մեկնություններ՝ դիմադրական հայացքի, ազգային փոխաբերության դիտանկյուններից:

Հիմնաբառեր. արդիականություն, Հրանտ Մաթևոսյան, քաղաքագրություն, գերիշխանություն, խորհրդային գրականություն, դիմադրական հայացք, «Խումհար», մարմին:

Ներածություն

Թեև քաղաքը Հր. Մաթևոսյանի արձակում մշտապես առկա է առանձին հիշատակումների, գյուղական կյանքի վրա ունեցած ազդեցության, հերոս–

ների՝ քաղաքի հետ կապի տեսքով, քաղաքի լիարժեք պատկերներ կարելի է գտնել միայն մի քանի երկերում («Կայարան», «Բաց երկնքի տակ հին լեռներ»): Անգամ այս գործերում, սակայն, քաղաքը գործողությունների զարգացման միակ վայրը չէ: Այս առումով բացառիկ է Մաթևոսյանի «Խումհար» վիպակը, որի այուժեն ամբողջությամբ զարգանում է Մոսկվայում, և որում գյուղը երևում է միայն միջնորդավորված կերպով: Վիպակի առավել մանրամասն ուսումնասիրությունն, այսպիսով, հատկապես կարևոր է դառնում մաթևոսյանական արձակում արդիականացման թեմաների քննության հաստեքստում:

Տեսական հիմքեր

Վիպակում քաղաքի պատկերումը քննվել է արդիականացման տեսության (modernization theory) կիրարկմամբ. արդիական քաղաքի ծագումն ու դրա գրական արտացոլումը հայաստանյան համատեքստում դիտարկվել է խորհրդային փորձառության հետ բազմաշերտ կապերի մեջ: Վիպակում հետխորհրդային այս փորձառությունների արտացոլումը վերլուծելու նպատակով կիրառվել է ամերիկացի հետազոտող Բեյլ Հուքսի կողմից առաջ քաշված «դիմադրական հայացքի» տեսությունը: Հենվելով մարմնի մշակույթի ուսումնասիրությունների վրա՝ դիտարկվել են մարմնականի պատկերումները վիպակում: Ուսումնասիրության մեջ կիրառվել են վերլուծական և համեմատական մեթոդները:

Արդյունքներ

Քաղաքի պատկերումը մաթևոսյանական արձակում ուղղակիորեն շաղկապված է խորհրդահայ իրականության մեջ արդիականացման գործընթացների հետ, ուստի անպայմանորեն պայմանավորում է արդիականացումից անբաժանելի այնպիսի խնդիրների արծարծում, ինչպիսիք են մարմնի մշակույթի փոխակերպումներն ու սիրային պրոբլեմատիկան: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել և մատնացույց են արվել «Խումհար» վիպակում այս թեմաների միջև կապերը՝ տեղորոշելով դրանք Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության ամբողջական հղացքի մեջ: Վեր է հանվել գերիշխանական խոսույթների վերանայումն ու դիմադրական հայացքի կիրառումը Մաթևոսյանի կողմից՝ հայաստանյան դիտանկյունից խորհրդային մայրաքաղաքի իրականությունը, ինչպես նաև «կենտրոնի» ու «ծայրամասի» մշակութային-քաղաքական հարաբերությունները պատկերելու համար: Առաջարկվել է «Խումհարի» նոր ընթերցում՝ զուգահեռաբար դիտարկելով վիպակում առկա՝ գերիշխանության և արդիականացման մեծ թեմաները:

Մույն հետազոտությունը կարող է օգտակար լինել ինչպես Մաթևոսյանի ստեղծագործության, այնպես էլ՝ արդիականացման, խորհրդահայ գրականության և մշակույթի և հարակից հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների համար:

Քննարկում

Վիպակը տպագրվել է նախ 1970 թ. «Սովետական գրականություն» ամսագրի 9-րդ համարում («Սովետական գրականություն», 1970, էջ 12-68), ապա 1978 թ.՝ «Կենդանին և մեռյալը» վերնագրով, «Ծառերը» ժողովածուի մեջ: Վիպակում ներկայացվում է Մոսկվայի բարձրագույն սցենարական դասընթացներին մասնակցող երիտասարդ հայ գրող Արմենակ Մնացականյանի մեկ օրը, որի ընթացքում պատկերվում են տարբեր ազգերի ուսանողների առօրյան, ուսումնական ընթացքը, ինտելեկտուալ վեճերը, երիտասարդական զվարճությունները:

Իր գյուղացի հերոսին պատկերելով մոսկովյան միջավայրում՝ Մաթևոսյանը նրան դնում է կրկնակի օտարության մեջ: Առաջին հերթին գործ ունենք օտար միջավայրի հետ. օտար երկիր, օտարազգիներ և օտար բարքեր: Բացի այդ՝ կա քաղաքի՝ իբրև օտարության, այլության տարածության ընկալումը, որը տեսանելի է Մաթևոսյանի մի շարք երկերում և, կարծում ենք, կենտրոնական նշանակություն ունի քաղաքի մաթևոսյանական հղացքի մեջ: Այս երկու օտարություններն իրականում սերտորեն փոխկապակցված են, որոշակի համատեքստում անգամ կարող են դիտվել իբրև նույնական, քանի որ վիպակը, ինչպես և Մաթևոսյանի ստեղծագործությունն առհասարակ, ինչպես նշել ենք, դիտարկելի են խորհրդային արդիականության համատեքստում:

Թերևս, կարևոր է նշել, որ ռուսական, նաև խորհրդային իրականությունը արևմտյան հետազոտողները սովորաբար համարում են թերի արդիականացված: Դևիդ Հոֆմանն անգամ այն կարծիքն է հայտնում, որ «արդի տնտեսական և քաղաքական համակարգի ասպեկտներից և ոչ մեկը բնորոշ չէր կայսերական Ռուսաստանի և Խորհրդային Միության դեպքերի համար» (Hoffmann, 2000, էջ 246): Ռուսաստանի՝ Արևմտյան Եվրոպայի երկրներից զարգացման տեմպերով հետ մնալը, իհարկե, մի շարք պատմական-քաղաքական պատճառներ ունենալով լիարժեք ավատատիրության ուշ հաստատումից և ուշացած վերացումից մինչև քաղաքական մշակույթի ինչ-ինչ առանձնահատկություններ: Ռուսական իրականության՝ Արևմուտքի հանդեպ մշակութային ստորադասության զգացողությունը շատ տիպական է անգամ խորհրդային ժամանակների համար, երբ ուղղակի հակամարտություն կար ԽՍՀՄ-ի և կապիտալիստական Արևմուտքի միջև: Սա տեսանելի է նաև «Խումհար» վիպակում, հատկապես՝ Մ. Անտոնիոնիի «Գիշերը» ֆիլմի ցուցադրությանը հաջորդող տեսարանում. «Դահլիճի լույսերը վառվեցին, և Եվա Օզերովան խղճուկ մեկն էր: Եվ խեղձուկրակ էին դահլիճի բոլոր աղջիկներն ու բոլոր կանայք և ամաչում էին նայել միմյանց»: Տեսարանի ազդեցիկությունը ավելի է մեծանում, երբ հաշվի ենք առնում, որ Անտոնիոնիի հայրենի Իտալիան բնավ էլ Արևմուտքի ամենազարգացած, ամենաարդիականացած երկիրը չէր:

Վերը նշված կարևոր յուրահատկություններով հանդերձ, սակայն, պետք է նշենք, որ այնպիսի ծայրահեղ գնահատումները, որոնք խորհրդային իրականությանը բնորոշ չեն համարում արդիականության քաղաքական և տնտեսական ասպեկտները, անպայմանորեն հենվում են արդիականության

նեղ՝ եվրոպակենտրոն սահմանման վրա: Դ. Հոֆմանն ինքը արդիականության բնորոշ հատկանիշներ է համարում ազգային պետությունների ստեղծումը, արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը և պառլամենտական ժողովրդավարության հաստատումը, որոնք, իհարկե, դժվար է վերագրել ԽՍՀՄ-ին, սակայն արդիականության առավել լայն ըմբռնումը, որ բնութագրվում է արդյունաբերականացման, պետական ապարատի առավել կայացման, աշխարհիկացման և ուրբանիզացիայի գործընթացներով, հնարավորություն է տալիս ԽՍՀՄ իրականությունը դիտարկելու առավել լայն համատեքստում: Այսպես՝ ռուսական գերիշխանական (hegemonic) քաղաքականության շարունակությունը խորհրդային պետության կողմից առավել լիարժեք կերպով ընկալվում է արդիականության խնդիրների համաձիգում: Ռուսագետ Թերի Մարթինը նշում է. «Խորհրդային քաղաքականությունը ձգտում էր իրարից անջատել բարձր մշակույթը և ազգային ինքնությունը: Խորհրդային բարձր մշակույթը՝ որպես համամիութենական մշակույթային դրսևորում, արմատացվում էր կրթության և պրոպագանդայի համընդհանուր, ստանդարտացված, թեև բազմալեզու, համակարգով: Սոցիալիզմը, այլ ոչ թե ազգայնականությունը պիտի լիներ պետության միավորիչ սկզբունքը: Ազգային ինքնությունը ընդունվում և իրապես պրոպագանդվում էր խորհրդային պետության կողմից՝ խուսափելու համար պաշտպանական ազգայնականությունից... Դրա փոխարեն ազգային ինքնությունը հետևողականորեն օժանդակվում էր ենթապետական մակարդակի վրա ազգային հանրապետությունների տեսքով՝ սեփական ազգային էլիտաներով, լեզուներով և մշակույթներով: Անշուշտ, այդ ազգային մշակույթները ստիպված էին յուրացնել, տեղական պայմաններին հարմարեցնել նոր խորհրդային բարձր մշակույթը: Խորհրդային քաղաքացիները պիտի ունենային ընդհանուր բարձր մշակույթ, բայց ոչ՝ ընդհանուր ազգային ինքնություն» (Hoffmann, 2000, էջ 246):

Այս քաղաքականության ուղղակի արտահայտությունն ենք տեսնում վիպակում: Հսկայական երկրի տարբեր ծայրերից Մոսկվա են եկել ամենատարբեր ազգերի երիտասարդներ, բնակվում են տիտղոսակիր ազգի մայրաքաղաքում պետական միջոցներով, դեռ մի բան էլ՝ նրանց հնարավորություն է տրված սեփական սցենար ներկայացնել, որի հիման վրա պիտի ֆիլմ նկարահանվի: Սրա հետ մեկտեղ, սակայն, սցենարների բովանդակությունը որոշակիորեն ուղղորդվում է՝ հնարավորություն չտալով ենթակա ժողովուրդների ներկայացուցիչներին սեփական անկախ օրակարգը առաջ քաշելու: Արմենակ Մնացականյանի և դասընթացի ղեկավար Վաքսբերգի միջև երկար ու լարված զրույցը, որ գրեթե վեճի է վերածվում, կարծես խտացնում է վիպակի ամբողջ ընթացքում ենթատեքստում առկա կոնֆլիկտը: Երկու մարդկանց բախում լինելով՝ այն մարմնավորում պաշտոնական մշակութային քաղաքականության և դրա հոսանքին դեմ ելած անհատ արվեստագետի միջև բախումը:

Անդրադառնալով Մաթևոսյանի ստեղծագործության համատեքստում «Խումհարի» տեղին՝ գրականագետ Սեյրան Գրիգորյանն այն համարում է մաթևոսյանական գեղագիտության խտացում և մաթևոսյանական արձակում

արծարծված հիմնական խնդիրների քննություն՝ միաժամանակ Մնացականյան-Վաքսերգ խոսակցությունը համարելով այդ վիպակի համար կենտրոնական (Գրիգորյան, 2016, էջ 103): Այս մեկնակետից է, որ, կարծում ենք, տեսարանը պիտի հնարավորինս հանգամանակից կերպով դիտարկվի: Սցենարի քննարկմանը զուգահեռ Մնացականյանի և Վաքսերգի միջև խոսք է գնում նաև կոնյակի մասին, որը Մնացականյանն առաջարկում է Վաքսերգին: Հայկական կոնյակի մասին ռեպլիկները պարզ առօրեականության մակարդակից խոսակցության թեժանալու ընթացքում ղեկավարի ձեռքին վերածվում են մշակութային գերիշխանության մահակի, սակայն այն ձևը, որով բարեհամբույր և ինքնավստահ Վաքսերգը Մնացականյանին «ցույց է տալիս իր տեղը», խիստ հետաքրքրական է և տիպական. «Հրաշք կոնյակ է, շշնջաց նա, - է՛ն արևոտ շոգ այգիները, է՛ն կարճիկ որթերը՝ Ուրարտուի ժամանակներից, է՛ն հին առուն...»: Ասվածը հայկական կոնյակի, Հայաստանի բնության ու հնամենի պատմության հանդեպ հիացմունքի խոսք է, որ, թվում է, չի կարող որևէ կերպ իբրև բացասական երևույթ դիտվել, սակայն գրույցի համատեքստում հնչում է իբրև սեփական դիրքի ընդգծման ժեստ: Անշուշտ, սա կապված է գերիշխանական հայացքի (hegemonic gaze) հետ, որը սահմանում է երկիրն իբրև «արևոտ», «հյուրընկալ» ու էկզոտիկ՝ այդպիսով խոսելով նորմավորող դիրքից: Սրա մասին խոսում է Հրաչ Բայադյանն իր «Կովկասի ռուսական պատկերը» հոդվածում. «Ավելի «բարեկամական» ստերեոտիպ է «Արեւաշող Հայաստանը (Վրաստանը, Ադրբեջանը)», որն «Անդրկովկաս» բառի նման մատնանշում է այն տեղը, որի մենաշնորհն է անվանելը և իմաստավորելը»: Սրա հետ մեկտեղ՝ հնության ընդգծումը կարծես ենթակա երկիրը նույնականացնում է անցյալի ու նախնականության հետ, ինչը ենթադրում է, որ արդիականությունը գերիշխանի մենաշնորհն է: Ինչպես Վաքսերգի այս կարճ ռեպլիկի, այնպես էլ ռուս գրականության մեջ Հայաստանի բնութագրումների դեպքում առաջին հերթին նկարագրվում են բնությունն ու գյուղը, որին հակադրվում է ենթադրաբար արդիական քաղաքներով լի կայսերական Կենտրոնը: Օրիենտալիստական այս բանաձևը թույլ է տալիս իմաստավորել «հետամնաց երկրների» տիրապետումը՝ լուսավորյալ Արևմուտքի/Հյուսիսի ձեռքբերումներով կիսվելու համար: Եթե սա համեմատենք «Բաց երկնքի տակ հին լեռներ» պատմվածքի հետ, ապա կարելի է տեսնել խորհրդային արդիականության երկու տարբեր մակարդակները: Պատմվածքում Երևանը գերիշխող դիրքում է գտնվում գյուղի հանդեպ՝ իբրև արդիական ծրագրի տեղական, ազգային կենտրոն, իսկ վիպակում երևում է բուն կենտրոնը՝ Մոսկվան, որին արդեն հակադրվում է ծայրամասային Հայաստանը:

